

„Droschak”

ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
REDACTION DU JOURNAL
„Droschak”
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

Հ. Յ. Դ. Ե. ԲԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ԿՈՎԿՍԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

Հ. Յ. Դաշնակցութեան Ե. Բ. Ընդհանուր ժողովը կանգնած է բաղաբաժնի երկու տարբեր պատկերների առջև: Մինչ մի կողմից գալիս ենք Թիւրքիայի մեր բաժնամեայ կուիւնների փայլուն յաղթանակն արձանագրելու, մինչ իրանի պատմութեան մէջ մեր մասնակցութեամբ բացւած նոր շրջանն ենք աւետում, մինչ երկու երկիրների բռնապետների տապալումը և ուժասպառ ժողովուրդների վերածնութիւնն ենք ողջունում,— այնտեղ՝ Ռուսաստանում սեւ ընկալիան է, որ տիրող է, յաղթական ժողովուրդի դէմ յայտարարւած պատերազմն է, որ շարունակում է մղել յամառ ու անողոր. այնտեղ՝ արիւնտա, նոր, մեծ պայքարի հեռանկարն է, որ դրւած է սպառնալից:

Ռուսական Յեղափոխութիւնը—նա, որ այնքան ուժգին զարկ տւեց Թիւրքիայի և իրանի շարժումներին, որ երկար ժամանակ իր վրայ սեւեռած պահեց ամբողջ Արևմուտքի ուշադիր հայեացքը, նա, որի ազդեցութիւնը սօցիալիստական մտքի և գործի ուղղութեան վրայ անուրանալի է,—այդ մեծ յեղափոխութիւնը, անզօր եղաւ, սակայն, պահպանել իր նւաճումները, ձեռք բերւած այնքան զոհողութիւններով:

Ցարւած գաղափարի վեհ թուիչքներով նա չը կշռեց իր ուժերը, հաշի չառաւ խոչընդոտների ամբողջ լրջութիւնը և կազմակերպւած ուժի հանդէպ չը պատրաստեց մարտական կուռ շարքեր:

Հակառակ արւած կրկնակի փորձերին, անհնարին եղաւ համախմբել կուռ յուսակցութիւնները մի բանակի մէջ միահամուռ գործողութիւնների համար, և յեղափոխական փայլուն ըմբոստացումները՝ ժողովրդական թէ՛ զինուորական՝ տարբեր ժամանակներում, տարբեր վայրերում ջսխջախեցին իրարից անկախ, իրարից անջատ Աւելին ևս,—իրենք կուսակցութիւնները՝ ազանդական ոգով սողորւած, բաժնւած էին և նոյնիսկ կուէի ընթացքում շարունակում էին բաժանել Փրակցիանների, տարւելով հատւածամուլ նեղսրտութեամբ՝ ներելի միայն աւօրեայ կեանքի խաղաղ շրջանում:

Պալատական կամարիլլան՝ սմբած սկզբում՝ յաջողեց այդ դրութեան հանդէպ՝ գործի դնելով իր վարչական կապերը, ամբացնելով ռաի տակ հողը, նախ՝ պօգրօմային համատարած գործողութիւններով և ապա՝ սիստեմատիկ ու անդուլ գրոհներով: Մի կողմից՝ յեղափոխութեան կարմիր սպանալիքը գործի դարձրած, միւս կողմից՝ զսպիչ միջոցները ժողովրդական լայն մասսաների վրայ ևս տարածելով, մերթ ամբոսի տականքները ռաի հանելով, մերթ պրօլօկատօրների աջակցութեամբ՝ սարսափ ազդող, բայց վիժելու սահմանւած ձեռնարկներ երևան բերելով, նա կարողացաւ խախտել յեղափոխութեան հեղինակութիւնը, ջլատել ուժերը, խոզովութիւններ՝ սերմանել, իր հետ կապել խոչոր բուրժուազիան ու կալածատէր ազնականութիւնը, ստիպել, որ ահաբեկւած խաւերը միապետութեան գրկում փնտրեն իրենց փրկութիւնը, և որ գլխաւորն է, նա իր ձեռքի տակ հաւաքեց զօրքը, թափել տալով նրա մէջ ամբարւած զայրոյթը հէնց իրենց յեղափոխականների և ժողովրդական լայն զանգուածների գլխին:

Հ. Յ. Դաշնակցութիւնը—նա, որ առաջինը դուրս եկաւ զինւած մասսաներով պլէվէեան ընթիմի դէմ՝ Կովկասում, վերջինը եղաւ, որ ենթարկեց միապետութեան վճռական գրոհին, և դա մի այնպիսի ժամանակ երբ կուսակցական ուժերի կարևոր մասերը կլանւած էին Թիւրքիայում սահմանադրութիւնը ապահովելու խնդրով իրանում՝ սահմանադրութիւնը յետ ստանալու և ժողովրդի ինքնապաշտպանութեան կուրը առաջ տանելու անյետաձգելի գործով:

Կուրը դաշնակցական շարքերի և ընդհանրապէս կովկասահայ մտաւորականութեան դէմ՝ երկարօրէն և

խնամքով նախապատրաստած, մղում է հայ ժողովրդի տակաւնքների աջակցութեամբ ու խրախուսանքով, յաճախ նոյն պաշտօնեաների ձեռքով, որոնք դեռ երեկ մեր կօմիտէների թողլուութեանն էին սպասում՝ իրենց պաշտօնատեղին երթալու համար, դաշնակցական մարմինների ու դատարանների աջակցութեանն էին դիմում և՛ յեղափոխական դրօշակի ետեկից քարշ ընկած՝ կազմակերպութեան մարտական ու գաղափարական կորովն էին գովաբանում:

Բէակցիան այսօր տէր ու տիրական է համայն Ռուսաստանում: Եւ նա կանգ չի առնում: Յայտարարած ազատութիւնները աւելի ու աւելի կրճատուում են, աշխատաւորութեան իրաւունքները՝ արեան գնով ձեռք բերած, սեղմուում են: Ազգային ճնշումները լայն չափեր են ընդունում: Լիֆլանդիայից, Լեհաստանից և Կովկասից յետոյ հերթը ինքնավար Ֆինլանդիային է հասել: Դուրսն պահուում է լոկ արտաքինը փրկելու համար ժողովրդական լայն մասսաները՝ շժմած արշաւախմբերից, էկզեկուցիաներից, կախաղաններից, լուում են իրենց ցաւերը: Ասպարէզը գիշատիչներին է և նրանց գարշապարը լիզող սողուններին:

Բայց դա երկար տեւել չի կարող: Քայքայող տնտեսութիւն, պետական պարտքերի յարատե աճում, կուտուրական կեանքի կաշկանդում, մատաղ ուժերի սիստեմատիկ բնաջնջում,—ահա ներքին պատերազմի և միապետութեան յաղթանակների իրական արդիւնքները: Երկիրը չի կարող երկար դիմանալ, դժգոհութիւնները կուտակուում են նորից, բողոքները սկսում են մարմին առնել գիտակից փոքրամասնութեան մէջ, յեղափոխական ոգին վերակենդանանում է: Բէակցիայի աջակիցներն անգամ սկսում են գիտակցել, որ նրա իւրաքանչիւր յաղթանակը մի մի պարտութիւն է երկրի համար, որ Ստոլիպինի դափնիները փշեայ պսակներ են իզվոյսկու ճակատին: Պէտքէեան ուղին է, որ վերահաստատուում է, և —չեն կարող չը յիշել —այդ ուղիի հետ է, որ կապւած են Մանջուրիան, Յուսիման և ներքին փոթորիկների վիթխարի պայթումը:

Յեղափոխական նոր պայքարի գերագոյն ստիպողականութիւնը մեր առջևն է. պէտք է պատրաստուել՝ զինւած անցեալի փորձառութեամբ: Կ. Յ. Դաշնակցութեան Եւրոպ. Ընդհ. Ժողովը ուշադրութեան առնելով այն կարեւոր հանգամանքը.

Որ Ռուսաստանի յեղափոխական կազմակերպութիւնները անցեալում ծանրանում էին գլխաւորապէս ծրագրային առանձնայատուկ ուղղութիւններն առաջ տանելու գործի վրայ,

Որ առանց ձեռնարկելու դրական միջոցների, որոնց նպատակը պիտի լինէր ապահովել և ընդարձակել ձեռք բերած ազատութիւնները, ոմանք զուտ տնտեսական պայքարի շուրջն էին կենտրոնացնում իրենց ջանքերը, ոմանք էլ սօցիալիստական մեծ յեղաշրջումն էին երազում Ռուսաստանում՝ յափշտակած գաղափարի վեհութեամբ, անտես առնելով արտաքին և ներքին խոչընդոտները,

և Որ դրանով յեղափոխական կուսակցութիւնները դիւրութիւններ էին ընձեռում միապետական ուժերին՝ վերականգնելու ընկած իշխանութիւնը՝

— Գալիս է այն հաստատ համոզման, որ Ռուսաստանի արդի սօցիալ-տնտեսական պայմաններում, մօտակայ գործունէութեան ծանրութեան կենտրոնը պէտք է համարել կ ո ի լ ը միապետական ընդհանուր ըէթիմի դէմ, որի գոյութեամբ չափազանց դժւարին, յաճախ ապարդիւն են աշխատաւորների տնտեսական նւաճումները և անխուսափելի՝ ազգային հալածանքները:

Ընդհանուր ժողովը աչքի առաջ ունենալով և այն մեծ ուժը, որ պահանջ է միապետական բիւրօկրատիան, այն մեծ խոչընդոտը, որ բղխում է ժողովրդական մասսաների և զօրքի քաղաքական տհասութիւնից, գիտակցելով, որ այդ բացասական պայմանների հանդէպ անզօր են եղել և անզօր պիտի լինին կազմակերպութիւնների անջատ գործողութիւնները,

Հրահանգում է իր մարմիններին՝ արծարծել միւս կուսակցութիւնների և խմբակցութիւնների շրջաններում ստիպողական անհրաժեշտութիւնը մի ընդհանուր համագործակցութեան, որին մասնակցէին ոչ միայն սօցիալիստական և յեղափոխական, այլ և բոլոր կազմակերպւած դիմադիր տարրերը:

Համագործակցութեան այս հրաւերը առաջինը չէ, որ բղխում է Դաշնակցութեան կողմից: Բայց այս անգամ նա գալիս է հնչեցնելու իր կոչը աւելի մեծ ուժգնութեամբ և վստահութեամբ, սրտապնդւած այն երկու յաղթանակներով, որ ձեռք բերեց համագործակցութեան տակտիկի շնորհիւ, Թիւրքիայի և Իրանի նման յետամնաց, ծայր-բունապետական երկիրներում:

Քաղաքական կռիւ, սահմանադրական լայն կարգերի հաստատում, ազգային հաւասարութեան իրական ապահովութիւն,—ահա այն որոշակի նշանաբանը, որի շուրջը հրաւիրուում են համախմբել Ռուսաստանի բոլոր կուռղ տարրերը, անկախ իրենց կուսակցական առանձնայատուկ կերպարանքից:

ԿԻՆԻԿԻՅ ԴԵՊՔԵՐՈՒ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Է. Յ. Դաշնակցութեան ընդհ. ժողովը լսելով Կիլիկիոյ շրջանին և վերջի աղէտներու մասին տրւած զեկուցումները, ինչպէս նաև քննութեան ենթարկելով յարակից պարագաները, եկաւ հետեւեալ եզրակացութեան.

Հաստատելով թէ՛ հայ ժողովուրդը ընդհանրապէս և հայ կուսակցութիւնները մասնաւորապէս Կիլիկիոյ, ինչպէս և Օսմանեան կայսրութեան մէջ չեն հետևած անջատողական բաղաբականութեան, այլ ներառած են եղբր արիւնոտ մէկ կուրի մը՝ ընդգէմ բռնակալութեան և հայատեաց կառավարութեան.

Թէ՛ Սահմանադրութեան յայտարարութիւնը բոլոր ազատականներուն հետ միասին՝ խանգավաւորէն ողջունւած է ամբողջ հայութեան կողմէ, մինչ ընդհակառակը, հին ըէթիմի արքանեակները՝ կաշառակեր պաշտօնեաներ, տէրէպէիներու ժառանգներ և իսլամները արտօնեալ դասակարգ կարծող ազգայններ, դժգոհ էին Սահմանադրութենէն ու ազգային հաւասարութենէն, ինչ որ շեշտած էին բազմաթիւ պարագաներու տակ ու տարբեր ձևերով.

Թէ՛ կառավարական պաշտօնեաները բռնած էին անտարբեր դիրք՝ դէպի այս ըէթսիօնէրական փորձերը, պարագայ մը՝ որ միանալով 1895—96-ի ջարդերու մեղսակիցներուն անպատիժ մնալուն, ենթադրել տուաւ տգէտ խուժանին՝ թէ կարելի է անպատիժ կերպով թալլել, խոշտանգել և կոտորել հայը.

Ապացուցւած համարելով թէ՛ մարտ 31-ի վաղորդայնին սկսած կիլիկեան կոտորածներու ատեն հայերը ոչ մէկ տեղ—նոյն իսկ զուտ հայկական շրջաններու մէջ—նախայարձակ չեն եղած, այլ ամենուրեք բռնած են միմիայն պաշտպանողական դիրք և հակառակ ասոր՝ անխնայ կերպով կոտորած են այն բոլոր վայրերուն մէջ ուր հայը կազմած է շնչին փոքրամասնութիւն կամ վար դրած է պաշտպանողական զէնքը՝ անձնատուր ըլլալով հակառակորդին.

Թէ՛ տեղական կառավարական պաշտօնեաները—ի բաց առեալ սակաւաթիւ անհատներ—գաւաճանած են իրենց ներկայական պարտականութիւններուն՝ ուղղակի կամ անուղղակի կերպով խրախուսելով կոտորածը, ըէտիֆները զինելու պատրուակին տակ՝ զէնք բաժնելով պաշտպանողներուն կամ թոյլ տալով կողոպտելու զինական պահեստները.

Թէ՛ զինուորական դրութիւն յայտարարելէ յետոյ, նախնական քննութիւններուն մասնակցած են կոտորածի կազմակերպիչներէն շատերը, որոնք ծածկելով իսկական մեղաւորները և յանցանքը բարդելով հայերուն վրայ, կարողացան դատապարտել հայեր, որոնց միակ յայնցանքն էր եղած ինքնապաշտպանութեան բնական թելադրութիւնը.

Գտնելով թէ վերջին Կիլիկեան աղէտներու ժամանակ սպաննւած են առնւազն 10,000 տեղացի ու դրսեցի աշխատաւոր հայեր, ամեն մէկը նեցուկ՝ ամբողջ ընտանիքի մը.

Թէ՛ կոտորածներու ատեն մարդասպաններու յառուկ ուշադրութեան առարկայ են եղած ունևոր և հողատէր ընտանիքները, որոնց բոլոր անդամները կոտորելով՝ ոճ-

րագործները նպատակ են ունեցել «մահլիւլի» օրէնքով տիրանալու «ժառանգ չունեցող» կալւածներուն.

Թէ՛ սպաննւածները թողած են հազարաւոր այրիներ, 10,000-էն աւելի որբ ու անպաշտպան երեխաներով. Թէ՛ 7000-էն աւելի ընտանիքներ ամբողջովին զրկւած են բնակարանէ, գործիքներէ, անասուններէ ու պաշարէ.

Թէ՛ նոյնչափ այլ ընտանիքներ—ազատած կոտորածէ—կիսով չափ կամ ամբողջովին ենթարկւած են թալանի, զրկելով տասնեակ տարիներու ընթացքին իրենց ձեռք բերած հարստութենէն.

Թէ՛ այդ միլիօնաւոր ընդհանուր վնասէն միայն ամենաչնչին մասն է վերագարձուած տէրերուն, իսկ մնացածը կը գտնուի հարևան թալանձիներու քով կամ վաղուց ի վեր վաճառուած ու սպառած է.

Համոզուած թէ՛ առանց հայերուն կրած նիւթական վնասներու հատուցման,—սովի, ցուրտի և այլ զրկանքներու պատճառով Կիլիկիայի հայութիւնը անխուսափելիօրէն զրւած է նոր, խաղաղ ձևով մը առաջ տարած կոտորածի առջև, — մինչ միւս կողմէն ուրիշին աշխատանքով հարստացած և անպատիժ մնացած թալանձիները նոր խրախոյս կը ստանան՝ կրկնելու իրենց արարքները նաև ապագային.

Թէ՛ Թիւրքիոյ պէս յետամնաց երկիրներու մէջ նման շարժումներու ատեն ամենամեծ պատասխանատուութիւնը պէտք է իյնայ ոչ այնքան կոյր գործիք խուժանին վրայ, որքան ժողովրդական զանգւածներու պաշտօնական ու անպաշտօն ղեկավարներուն ու այդ զանգւածները գրգռող ու ֆանատիկոսացնող ամենախայտի անհատներուն վրայ.

Թէ՛ արգարութեան անաշուտ գործադրութիւնը Կիլիկիոյ մէջ՝ ոչ միայն անկապտելի իրաւունք է սուլածաններուն, այլ և միջոց՝ յանցաւորները պահելու հասարակական օրինականութեան սահմաններու մէջ, և միակ պայման՝ սահմանադրական կառավարութիւնը և ամբողջ պետութիւնը դնելու իրենց պարտականութեան և կոչման բարձրութեան վրայ:

Նկատի ունենալով ահա այդ բոլորը, Դաշնակցութեան ընդհանուր ժողովը կորոշէ՝

շետամուտ ըլլալ և կուսակցական ու այլ միջոցներով իրագործել հետեւեալ պահանջները՝

Ա. Օրինակելի պատժի ենթարկել տալ իրենց պաշտօնին մէջ թերի գտնուած պաշտօնեաները, ինչպէս նաև կոտորածի ու թալանի ղեկավարները, մնացած մեղսակից ժողովրդեան մասան ենթարկելով հաւաքական պատասխանատուութեան՝ իբրև թալանձի և ուրիշին գոյքն ու աշխատանքը աւերողներ.

Բ. Հատուցանել կամ վերագարձնել հայերու կրած վնասները, վերաշինել տուներն ու շէնքերը, վճարել ոչնչացած ու պակաս անասուններու, գործիքներու և այլ շարժական գոյքերու արժէքը.

Գ. Այրի մնացած կիներուն, որբերուն կամ սպաննւածներու աղգականներուն ապահովել սպաննւածներու աշխատանքի արժէքը կամ նշանակել այդ արժէքին համապատասխան թոշակ. իսկ ամբողջովին փճացուցած ընտանիքներու աշխատանքի փոխարժէքը վճարել համապատասխան համայնքներու եկեղեցիներուն կամ դպրոցներուն.

Դ. Տարւայ ընթացքին հասցւած սովորական աշխա-

տանքի կորուստին փոխարէն՝ վնասւած շրջաններու հայու թիւնը ազատել մէկ բանի տարի սովորական տուրքերէ:

Ե. Ոչնչացուցւած ընտանիքներու անտէր մնացած և յմահելիչ՝ հրատարակելիք հողերը յանձնել համապատասխան հայ համայնքներուն՝ ի դիմաց իրենց եկեղեցիներուն և դպրոցներուն:

Զ. Պուժով սկսիլ Ատանայի ու Հալէպի վիլայէթներուն ժամտարմիրայի, ոստիկանութեան և վարչութեան վերակազմութեան՝ իսկական մասնակցութեամբ:

բոլոր ազգութեանց, վտանգի ենթակայ հայ գիւղերուն մէջ տեղացիներէն հաստատելով պահակներ, զինուած պետական զէնքերով:

Ատոր հետ միասին որոշեց՝ յայտնել կուսակցութեան յարգանքները այն բոլոր հասարակական խաւերուն, հաստատութիւններուն ու անձերուն — բրիտանեայ, մասնաւորապէս, Ֆէլլահ—որոնք կիլիկեան հայ ժողովուրդի տագնապալից օրերուն կանգնած մնացին իրենց մարդկային ու քաղաքացիական պարտականութեանց բարձրութեան վրայ:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն Ե Ր

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Համոզւած՝ որ սահմանադրութիւնը սկիզբ կը դնէ Օսմանեան երկրի վերածնութեան, իրաւազուրկ ազգերու և կեղեքւած դասերու վիճակի բարելաւման, ինչպէս նաև կը հանդիսանայ խոշոր ազգակ մը իրաւակարգերու յաղթանակին գրացի երկիրներու մէջ (Ռուսիա և պարսկաստան):

Նկատելով միևնոյն ատեն՝

ա) Որ աւատական իշխանութեան մնացորդները, ինչպէս նաև նախկին ղէժիմի բարիքները վայելած արտոնեալ խաւերը՝ սահմանադրական իրաւակարգը սպառնալիք համարելով իրենց գոյութեան ղէժիմի անաջ բերելու առիթներու կը սպասեն:

բ) Որ մեր գրացի մահմետական զանգւածները թիւր կերպով կ'ըմբռնեն սահմանադրական կարգերու էական նշանակութիւնը, սահմանադրութիւնը համարելով լոկ առանձնաշնորհում բրիտանեաներուն տրւած, անհաշտ աչքով կը նային կատարուող փոփոխութեան վրայ, և որ սահմանադրական ղէժիմի ապաւէնը կը ներկայացնէ ներկայիս զինուորականութեան և մտաւորականութեան մէկ մասը միայն:

գ) Որ սահմանադրութեան հռչակման գործի մէջ ներքին հասունցած պահանջներու հետ միասին նաև արտաքին վտանգաւոր սպառնալիքը որոշ դեր է խաղացած, և որ

Հետևաբար, սահմանադրական ղէժիմի օգտակարութեան գիտակցութիւնը դեռ ևս կեանքի մէջ բաւարար չափով հիմք չէ գտած:

Ընդհանուր ժողովը որոշեց՝

1) Պաշտպանել օսմանեան սահմանադրութիւնը բոլոր հնարաւոր միջոցներով, և միևնոյն ատեն բացատրել ու լայնցնել ասոր բովանդակութիւնը իրաւակարգի, ժողովրդապետութեան և ազգերու հաւասարութեան տեսակետներէ:

2) Այդ հրամայողական պահանջի վրայ կեդրոնացած պահելով ամբողջ ուշադրութիւնը՝ կոչ ընել մեզ հետ կապ ունեցող բոլոր ուրիշ տարրերուն՝ խոյս տալ յայն բոլոր քայլերէն, որոնք կրնան ներքին ազգային, ինչպէս նաև արտաքին-միջազգային բարդութիւններու առիթ ծառայել:

3) Յատուկ ուշադրութիւն դարձնել ընդհանուր

ընդթ ունեցող գործնական այն պահանջներուն և ձեռնարկներուն, որոնցով հնարաւոր կըլլայ մէկ կողմէն ցոյց տալ օսմանեան ժողովուրդներուն սահմանադրութեան առաւելութիւնները, և միւս կողմէ՝ սերտ կապ հաստատել տարբեր ցեղերու աշխատաւոր դասակարգերու միջև, ընդգծելով անոնց շահերու նոյնութիւնը:

4) Ձեռնհաս մարմինները պարտաւոր են ի հարկին կիրարկանել մարտական բոլոր միջոցները՝ պաշտանելու սահմանադրական ղէժիմը որեւէ հարւածի և փորձանքի դէմ:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Մանրամասն բնութեան ենթարկելով Ռուսիոյ քաղաքական արգի վիճակը, և

ա) Նկատի ունենալով որ Ռուսիոյ մէջ միապետական ղէժիմը՝ յենւած անհրաժեշտ հողատէրերու և խոշոր բուրժուազիայի վրայ ու շահագործելով աշխատաւոր խաւերը և քաղաքացի միջակ դասը՝ վաղուց ի վեր չի համապատասխաներ երկրի քաղաքական և տնտեսական հասունութեան:

բ) Գիտակցելով որ արտաքին բարդութիւններու և ներքին յեղափոխութեան ճնշման տակ 1905-ին յայտարարուած սահմանադրութիւնը, դիմադիր տարրերու տաքտիքային սխալներու շնորհիւ (ներքին երկպառակութիւն, մարտական ուժի թուլութիւն), յետագայի մէջ էապէս վերացեցաւ, ու այսօրուան Պետական Գուման կը հանդիսանայ միայն իբրև նպաստաւոր միջոց ու քող՝ փրկելու կառավարութեան գիրքը թէ՛ ներսը և թէ՛ դուրսը:

գ) Գտնելով որ ժողովրդական մասսաներու վրայ յենուող կուսակցութիւնները դրական հետևանքներու կարող են հասնիլ միայն այն պարագային, երբ առանց մոռացութեան տալու կուսակցութեան հետաւոր նպատակները, կը մարզեն մասսաները գործնական քայլերով կոնկրետ հարցերու շուրջը (աւատական կարգերու վերացում, հողերու բաշխում, հարկերու թեթեւացում և այլն):

Ընդհանուր ժողովը որոշեց՝

1) Կազմակերպական շարքերը զօրացնելու և ամրապնդելու պահուն՝ ամենամեծ ուշադրութիւն դարձնել ընդհանուր քաղաքական պահանջներու և կուրի կա-

ընտրութեան, ինչպէս և այն միջոցներու վրայ, որոնք կը պայմանաւորեն անոնց յաղթանակը.

2) Նախաձեռնութիւն ստանձնել՝ հրաւիրելու թէ Ռուսիոյ մէջ ընդհանրապէս և թէ Կովկասի մէջ մասնաւորապէս՝ ընկերավարական և ասոնց համաձայնութեամբ ուրիշ դեմօկրատիկ կուսակցութիւններու համագումար մը՝ ընդհանուր պահանջներ, տակտիկ և գործունէութեան ձևեր մշակելու համար:

3)

4) Ներկայ հալածանքներու դէմ միջոցներ ձեռք առնելը թողուլ կովկասեան ձեռնհաս մարմիններուն:

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

Հ. Յ. Գաշնակցութեան Ե-րդ Ընդհանուր ժողովը հաւանութիւն տալով՝ Պարսկաստանի և Կովկասի մարմիններու գործունէութեանը Պարսկաստանի մէջ գտնելով որ այդ քայլերը եղած են Գ-րդ Ընդհ. ժողովի որոշումներու կիրառումը, ժամանակի և տեղի պահանջներու համաձայն, և լսելով զեկուցումներ ապագայ մեր ընկերներու մասին,

Ու նկատելով՝

ա) Որ պարսկական շարժումները, ուղղած աւատական դրութեան դէմ՝ սօցիալական յեղաշրջման բնոյթ ունին.

բ) Որ Պարսկաստանի վերածնութիւնը իր մեծ օգուտը ունի Թիւրքիոյ, Կովկասի և մօտաւոր արևելքի վերածնութեան համար.

գ) Որ Պարսկաստանի ներկայ շարժման յաջողութեանը մէջ է կայանալու և պարսկահայ ժողովրդի ազգային, կուլտուրական և տնտեսական շահերու բարգաւաճումը.

դ) Որ Գաշնակցութիւնը իր ակտիվ մասնակցութեամբ Պարսկաստանի շարժումներու մէջ՝ կը վերահաստատէ այն հասարակական-կուլտուրական կապը մեր և մահմետական ժողովուրդներուն միջև, որ դարերէ ի վեր խզւեր է.

ե) Որ մեր յարաբերութիւններու այդ նոր շրջանը իր անվիճելի օգուտն ունի մեր և մահմետական ժողովուրդներու մերձեցման տեսակէտէ՝ Կովկաս, ինչպէս նաև Թիւրքիա.

Որոշեց՝

Արտօնել Պարսկաստանի գաշնակցական իրաւասու մարմինները—որոնք մինչև այժմ պաշտօնապէս նկատւած են իբր օժանդակ Թիւրքիոյ և Կովկասի հանդէպ— հրապարակ գալու իբրև յեղափոխական գործուն մարմիններ:

Նաև ատոր հետ Ընդհանուր ժողովը կը հրահանգէ՝

1) Սերտ կապ պահպանել պարսիկ ժողովուրդի դեմօկրատիկ տարրերու հետ, կատարելով ընկիւղ բոլոր քայլերը համագործակցութեամբ անոնց հետ.

2) Աշխատիլ առաջ բերել անոնց մէջ աշխատաւորական կուսակցութիւններ՝ համապատասխան Գաշնակցութեան աշխարհայեացքի.

3) Կանոնաւորել ներկայիս գոյութիւն ունեցող ազգային-կուլտուրական հիմնարկութիւններու ձևերը և ապահովել զանոնք պետական հիմնական օրէնքներով:

Գաշնակցական մարմինները Պարսկաստանի մէջ գործնական պատասխանատու ձեռնարկներու դիմելէ առաջ՝ պէտք է որ ստանան կուսակցութեան բարձրագոյն պատշաճ մարմիններու համաձայնութիւնը:

Տ Ա Ք Յ Ի Կ Ա

Քննելով կուսակցական տարտիկը և նկատելով՝

Որ սահմանադրութեան հաստատումով Թիւրքիոյ և Իրանի մէջ հնարաւորութիւն կայ կուսակցական նորմալ աշխատանքի.

Որ այդ երկու երկրներու մէջ սահմանադրական կարգերը չեն ամրապնդւած և դեռ ևս անոնց վտանգ կրսպառնայ ըհակսիծնի կողմէն,

Ընդհանուր ժողովը որոշեց՝

1) Հրաժարիլ այժմեան Թիւրքիոյ և Իրանի մէջ իբրև սահմանադրական երկիրներ, դաւադրական միջոցներու գործադրութենէն.

2) Վերարկանել կազմակերպութեան մարտական բոլոր ուժերը սահմանադրութիւնը պաշտպանելու և ըհակսիծնի դէմ կռւելու համար:

Ժողովը միանգամայն կը հրահանգէ կազմակերպութեան մարմիններուն, Թիւրքիոյ մէջ օրինական բոլոր միջոցներով բողոքել ընկերակցութեան Յ-Գ-րդ յօդուածներուն դէմ, որոնք փոխանակ նպաստելու ազգերու մերձեցման և սահմանադրական կարգերու հիմնաւորման, նոր դռներ պիտի բանան ներքին բարդութիւններու համար:

Ի Ն Ք Ն Ա Պ Ա Շ Տ Պ Ա Ն ՈՒ Թ Ի Ի Ն

Գաշնակցութեան Ե-րդ Ընդհանուր ժողովը մասնաւորապէս բնութեան ենթարկելով ինքնապաշտպանութեան խնդիրը և լսելով կուսակցութեան մարմիններու կարծիքները այդ մասին,

և նկատելով՝

1) Որ հայ ժողովուրդը, յեղաշրջման ներկայ անցողական շրջանի մէջ ընդհանրապէս, չէ կարող ապահով նկատուել.

2) Որ ըհակսիծն տարրերը իրենց նպատակներու իրագործման համար՝ կը շարունակեն ոչ միայն սահմանադրական տարրերու դէմ գրգռումներ առաջ բերել, այլ և թշնամութիւն սերմանել այլակրօն և այլացեղ ժողովուրդներու միջև, ինչպէս այդ ապացուցին կովկասեան ընդհարումները, մարտ ՅԱ-ը, Ատանայի աղէտը.

3) Որ հետեւաբար ինքնապաշտպանութեան պարտականութիւնը կ'իյնայ ժողովրդական բոլոր խաւերու, ինչպէս նաև բոլոր բաղաքական կուսակցութիւններու վրայ:

Որոշեց՝

ա) Ինքնապաշտպանութեան գործը, իբրև համաժողովրդական՝ դնել ժողովրդական և անկուսակց. հողի վրայ.

2) Նախապատրաստական շրջանի մէջ, Գաշնակցութեան բոլոր անդամները պարտաւոր են մասնակցել ինքնապաշտպանութեանը, իբրև անհատներ, նպաստելով անոր կազմակերպելուն ու զինման գործին.

գ) Ատանգի ատեն Գաշնակցութիւնը հրապարակ կուգայ իր ամբողջ ուժով թէ ընդհարման առաջըը

առնելու և թէ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը ուժեղացնելու համար:

Ընդհանուր ժողովը նկատելով որ ինքնապաշտպանութիւնը ներկայ պայմաններու մէջ սերտ կապած է բռնապետական երկրներու մէջ բուն յեղափոխական քայլերու, իսկ սահմանադրական թիւրքիոյ մէջ՝ սահմանադրութեան պաշտպանութեան և ըէակսիօնի դէմ ուղղած կուրի հետ, կը հրահանգէ կուսակցական մարմիններուն այդ գործի համար ևս կապ հաստատել յեղափոխական և սահմանադրական ուրիշ տարրերու հետ:

ԱԶԳԱՅԻՆ-ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Բննելով Գաշնակցութեան մասնակցութի խնդիրը ազգային-կուլտուրական հիմնարկութիւններու և գործերու մէջ, և ուշադրութեան առնելով այդ առիթով արտաստատած բոլոր հայեացքները,

Ու նկատելով՝

1) Որ կազմակերպութիւնը իր առաջ ունի՝ իր ծրագրին և ապօրինի վերաբերող ուղղակի նպատակներ, որոնց ներքին պիտի լինի կուսակցութեան աշխատանքի և ջանքերու մեծագոյն մասը:

2) Որ մեր ազգային-կուլտուրական հիմնարկութիւնները, թէև իրենց ներկայ կազմակերպութեամբ ուղղով չեն համապատասխաներ մեր սկզբունքներուն, բայց սերտ առնչութիւն ունին մեր ժողովրդի կուլտուրական կեանքի հետ և կ'ամփոփեն իրենց մէջ ազգային-կուլտուրական ինքնավարութեան սաղմերը:

Ընդհանուր ժողովը որոշեց՝

ա) Գաշնակցութիւնը, իբրև կուսակցութիւն չպիտի մասնակցի ազգային-կուլտուրական և հասարակական հիմնարկութիւններու մէջ:

բ) Կուսակցութեան անդամները, իբրև անհատ քաղաքացիներ, կարող են մասնակցիլ այդ հիմնարկութիւններուն, առանց հակասելու կուսակցութեան սկզբունքներուն:

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱԽՈՐՆԵՐՈՒ ԴԻՐՔԸ

Ընդհանուր ժողովի կողմէ գծած ուղղութեամբ՝ կուսակցական մարմիններու հետ՝ պիտի հետևին նաև թիւրքիոյ Ռուսիոյ և Պարսկաստանի պարլամենտներու գաշնակցական պատգամաւորները:

Այս պատգամաւորներու նկատմամբ ընդհ. ժողովը կը հրահանգէ նաև՝

1) Գործել հաւաքական խորհրդակցութեամբ ու պատասխանատուութեամբ:

2) Սերտ յարաբերութիւն պահել զիրենք ընտրող շրջաններու և Կոմիտէներու հետ և փոխադարձ տեղեկութիւններ ստանալ:

3) Իրենց պարլամենտական քայլերու համար խորհրդակցիլ իրենց ներկայացուցած շրջանի բարձր մարմնի հետ:

4) Հիտրշել պարլամենտի մէջ կօնկրէա խնդիրներու

շուրջը ժամանակաւոր բլօկներ կազմելէ այն կուսակցութիւններու հետ, որոնք համեմատաբար մեղ մօտիկ են:

5) Պարլամենտական գործունէութեան ընթացքին՝ բոլոր բնուող հարցերը լուսաբանել աշխատաւոր և ճնշած խաւերու շահերու տեսակէտէն:

6) Նախարարութիւններու և կառավարութեան նկատմամբ ունենալ անաչառ քննադատողներու դեր, պաշտպանելով սկզբունքներ ու հանրային շահեր և ոչ անձեր:

7) Պատգամաւորներուն, ինչպէս նաև դաշնակցականներուն առհասարակ կ'արգիլուի մտնել նախարարական կազմերու մէջ:

ԾԱՆՕԹ.—Այս որոշումը չի վերաբերիր յեղափոխական և բացառիկ-անցողական օրհաններուն: Իր ներկայացուցած օրհանի դեկլարատ մարմիններու համաձայնութեամբ՝ դաւանակցական ընկերներ կարող են մտնել ժամանակաւոր կառավարութեան մէջ՝ դադրելով նոյն օրէն կուսակցութեան գործօն անդամ ըլլալէ:

8) Ընդունելով որ գաշնակցական պարլամենտական Ֆրակցիան մարմին մը կը կազմէ՝ Ընդհանուր ժողովը պարտք կը դնէ անոնց վրայ՝ իբրև այդպիսին՝ իրենց ներկայացուցչի միջոցով մասնակցել Ընդհանուր ժողովին և ներկայացնել հաշվետուութիւն:

Հ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ւ Ն

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԼՆԻԱՅԼ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԵՏ ԹԻՒՐԻՔԻՈՅ ՄԷՋ

Մօտիկէն ծանօթանալով օսմանեան պետութեան մէջ գտնուող այլ և այլ քաղաքական կուսակցութիւններու և խմբակցութիւններու գործունէութեան,

եւ Ընդհանուր ժողովը նկատի առնելով,

1) Որ առանց բոլոր սահմանադրական տարրերու համագործակցութեան և մերձեցման՝ շատ դժուար, նոյնիսկ անհնար պիտի ըլլայ սահմանադրական ըէժիմը ապահովել ըէակսիօնէր տարրերէն, որոնց վերերևան հաւանականութիւնը դեռ շատ զօրեղ է:

2) Որ գործող քաղաքական կուսակցութիւններու ներքին հակամարտութիւնն ու թշնամանքը՝ ըէակսիօնի ձեռքին ամենանպաստաւոր գէնք է՝ նորէն դաւելու նորահաստատ սահմանադրութեան դէմ, ինչպէս ցոյց տուաւ մարտ 31-ը:

3) Որ թիւրքիոյ մէջ՝ սահմանադրական կարգերը ամրապնդած չըլլալով, քաղաքական որոշ դաւանանք ունեցող կուսակցութիւններ և հասարակական որոշակի հոսանքներ դեռ ևս չեն զուեր և կազմակերպւեր, և որ երկրորդ՝ թիւրքիոյ վստահելի տարրերը—շահագրգռած իրաւակարգը արմատացնելու գործի համար—համախմբած են «Իթթիհատ վէ Թէրաքքը» կազմակերպութեան մէջ:

Որոշեց՝

1) Շարունակել համագործակցիլ Իթթիհատի հետ ընդհանուր ձեռնարկներու և երկու կուսակցութիւններու ներկայացուցիչներէ կազմած խառն կոմիտէներու միջոցով, մնալով հաւատարիմ Գաշնակցութեան հիմնական սկզբունքներուն և դուրս չգալով Ընդհանուր ժողովի գծած ուղղութեանէն:

2) Խորցնել և լայնցնել համերաշխութեան գործը՝ դեմօկրատիկ ընթացիկներու ուղղութեամբ, համագործակցութեան հրահրելով նաև երկրի սահմանադրական և դիմադիր միւս տարրերը:

3) Ոչ մէկ ջանք չխնայել՝ յաջողցնելու համար դիմադիր քաղաքական հայ կուսակցութիւններու և իմբակցութիւններու համերաշխ գործունէութիւնը:

ԾԱՆՕԹ.—ա) Իբր այդ ուղղութեամբ նախապատրաստական ֆայլ՝ Ընդհանուր ժողովը կը յանձնարարէ Արեւմտեան Բիւրօին՝ նրախիւղ զանազան ֆայլ կուսակցութիւններու խորհրդակցական ժողով եւ ձգտել համախառնութիւն կայացնել ֆանի մի անյետա ձգելի խնդիրներու շուրջ—սահմանադրութեան՝ սպանովումը, ազգային կուլտուրական օտններու պաշտպանութիւն եւ այլն:

բ) Ասոր նեւ միառիւն կը յանձնար արէ բոլոր մարմիններուն ուժ սալ եւ իրականացնել Դաւեանցութեան Դ.րդ Ընդհանուր ժողովի (1907) հրահանգած «Միջկուսակցական աւեանները»:

4) Սերտ կապ հաստատել մակեդոնական կուսակցութիւններու հետ, որոնք մեր առաջին դաշնակիցները եղած են՝ բռնակալ ըէթիմը տապալելու գործի մէջ և ներկայիս կարող են՝ իբրև գիտակից ուսմակալար ուժեր՝ նպաստել սահմանադրական ըէթիմի ամրապնդման՝ դեմօկրատիկ ուղղութեամբ:

Միւսնոյն ժամանակ Ընդհ. ժողովը որոշեց կոչ ընել՝ Դաշնակցութեան կողմէ՝ մակեդոնական կազմակերպութեան երկու հատուածներուն՝ վերջ գնելու յեղափոխական համերաշխութեան վնասող արիւնհակ հակամարտութեան և այդ բայով զգացնել համագործակցութեան աշխատանքը:

5) Միջկուսակցական համերաշխութեան նոր ուժ տալու և ընդհանուր տաքտիկ (գործելակերպ) մշակելու համար՝ ձեռնարկել բոլոր ազգերու քաղաքական կուսակցութիւններու համաժողովներու գումարման:

Պ Ր Օ Պ Ա Գ Ա Ն Գ

(Գրաւոր եւ բանաւոր)

Ծանօթանալով կազմակերպութեան գրաւոր և բանաւոր պրօպագանդին նւիրած զեկուցումներուն,

Ընդհանուր ժողովը որոշեց՝

1) կուսակցութեան կեդրոնական օրկան «Դրօշակը» շարունակել հրատարակել ժընեվ:

2)

3) Հրատարակել «Դրօշակը» ամիսը անգամ մը և անոր բովանդակութեան մէջ առաջնակարգ տեղ տալ

ա) Ծրագրային հարցերուն, բ) Սօցիալիստական և յեղափոխական վարդապետութեան նւիրած ուսումնասիրութեանց, գ) Մեր երկրի և մեր կուսակցական գործունէութեան վերաբերող լուրջ տեղեկագիրներուն:

4) Ընդունելով կիսապաշտօնական թերթերու օգտակարութիւնը, իրաւասու մարմիններուն թողուլ համաձայն մեր կանոնագրի, կիսապաշտօնական օրկաններ հիմնել:

5)

6)

7) Շարունակել բրօշիւրներու հրատարակութիւնը ժընեվ, Պոլիս և կովկաս՝ յարաբերութեան մէջ գնե-

լով այդ տեղերու հրատարակիչ մասնակուսակցները՝ գործի մէջ հետևողականութիւն մտցնելու համար:

8) Առանձին հոգ տանել առհասարակ ուժեղացնելու կուսակցութեան գրաւոր և բանաւոր պրօպագանդը, թէ՛ վերը յիշած օրգաններու և թէ՛ տեղական շրջիկներու, պրօպագանդային դասընթացներու, դասասուսուցիչներու, լսարաններու ու թոռուցիկներու միջոցով, իբրև լաւագոյն միջոց՝ տարածելու կազմակերպութեան մտքերը և խտացնելու մեր շարքերը:

ԾԱՆՕԹ.—Թոռուցիկներու հրատարակութիւնը վերապահած է կեդրոնական կոմիտէներուն և կամ տեղի կոմիտէայ անոնց համաձայնութեամբ:

Գ Ա Ղ Ո Ւ Թ Ն Ե Ր

4. Յ. Դաշնակցութեան Խորհ. Ընդհանուր ժողովը լսելով Ամերիկայի, Բալկանի, Եգիպտոսի և Իւրօպայի հայ գաղութներու վերաբերմամբ եղած զեկուցումները, ծանօթանալով անոնց կազմակերպական ու կրթական-կուլտուրական վիճակին, և նկատի առնելով,

1) Որ Թիւրքիոյ ներկայ քաղաքական-տնտեսական պայմաններուն մէջ չպիտի կասի գաղթականութեան հոսանքը և հետևաբար կազմակերպութիւնը պիտի պահէ իր գոյութեան իրաւունքը գաղութներու մէջ և պիտի շարունակէ իր նիւթական և բարոյական օժանդակութիւնները երկրի կազմակերպման գործին:

2) Որ գաղութներու հայութիւնը կազմած ըլլալով Թիւրքիոյ գրեթէ ամեն կողմերէ եկած հայերէ՝ ունի իր կարևոր ներգործութիւնն Թիւրքիոյ հայ ժողովրդի հետ կուսակցական և կուլտուրական կեանքին մէջ և գաղութներու կազմակերպութեանց շարքերէն երկիր դարձող պատրաստած ընկերներ կրնան օգտակար հանգիստնալ իրենց մտաւոր-մարզական պատրաստութիւններով:

3) Որ գաղթականութիւնը մնալով անուշագիր՝ կը գտնուի լուծելու վտանգին տակ զինքը շրջապատող քաղաքական ուժեղ ազդեցութեան շնորհիւ, առանց կարենալու օգտակար լինել երկրին:

Կը յանձնարարէ՝

ա) Ձարկ տալ գաղութներու պրօպագանդին և ըստ տեղեկ անոնց կուլտուրական կեանքը բարձրացնող գործունէութիւնը:

բ) Ոչ մէկ ջանք չխնայել յարաբերութեան մէջ գնելու հայ գաղութները տեղական աշխատակարարական շրջաններուն ու ընկերվարական կազմակերպութիւններուն հետ:

գ) Յանձնարարել ձեռնհաս մարմիններուն՝ ուղարկել մնալուն և պատահական պրօպագանդիստ ուժեր՝ համաձայն իւրաքանչիւր գաղութի կարիքներուն:

ԾԱՆՕԹ.—Պարտաւորեցնել «Իւրօպայի Դաւեանցական Աստուղական Միութիւնը» որպէսզի իր պարտականութիւններէն մէկը համարէ՝ զաղութներու պրօպագանդը և այդ ուղղութեամբ գործ դնէ շուրջնալի աշխատանք:

Ե.Պ. ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՐ

Երկուերի այս ծանր օրերում, յեղափոխական ու հակայեղափոխական հոսանքների սուր ու համադարձ բաղխումների միջոցին, Գաշնակցութիւնը գումարեց իր հինգերորդ համաժողովը և ձևակերպեց իր տակտիկը հայկական իրականութեան հանդէպ—իր ուժի ու հեղինակութեան, իր կատարած և կատարելիք դերի հպարտ գիտակցութեամբ:

Երբէք կուսակցական մի համագումար չէր հրաւիրուել այսքան խորհրդաւոր ու ծանրակշիւ պարագաներում: Տրամադրութիւնները—խառն, երբբուն, ինչպէս կացութիւնը... Մի կողմից բերկրանքի ու լաւատեսութեան զւարթ շեշտեր, միւս կողմից՝ դողացնող անհանգստութիւն և յոռետես նախազգացումներ: Իրականութիւնը արդարացնում է և այս և այն...

Առաջին անգամը հայ մարտական կուսակցութիւնը գալիս էր արձանագրելու մի մեծ, պատմական իրողութիւն, առաջին անգամը նա գալիս էր ազդարարելու, որ հայ երկրի բոլոր երեք հատածները փարել են սահմանադրական ազատութեան դրօշակին, որ հայ դժբախտ ժողովրդի բոլոր երեք բեկորները — Թիւրքիայում, Ռուսաստանում, Պարսկաստանում — դարեր շարունակ հալածական ու գերի, դարեր շարունակ կորցրած իրենց անկախութիւնը, այսօր գտնուում են, վերջապէս, բաղադրական վերածնութեան պրօցէսի մէջ:

Այդպէս է ներկայի մեծագոյն իրողութիւնը, որքան էլ ուժգին ղողանջեն յոռետեսութեան ահազանգերը, որքան էլ ուժգին փչեն հիւսիսային հողմերը... Եւ այդ իրողութեան գիտակցումը խոր ու իրաւացի գոհունակութիւն է պատճառում բնականաբար, նախ և առաջ այն կուսակցութեան շարքերում, որը ամեն տեղ, թէ Թիւրքիայում, թէ Վոլկաստում, թէ Իրանում,—պատմականօրէն ստանձնած իր միասնօրէն զօրութեամբ—պարզել է իր դրօշակը, ծաւալել է իր գործունէութիւնը, խթանել է ընդհանուր, համապետական վերածնութեան շարժումներին, տւել է թանկագին, անմոռանալի զոհեր...

Ամեն տեղ—նոյն, ընդհանուր, ամբողջական և պատահի հետապնդումը ամեն տեղ՝ նոյն հարազատ ժողովրդի առաջադիմութեան ու բարգաւաճման շարունակը:

Արիւնի, շահերի, նպատակի ու տենչանքների այդ միութեան գիտակցութիւնը շեշտուել է Գաշնակցութեան բոլոր ընդհանուր ժողովների մէջ, նա շեշտուեց ուժգնութեամբ և վերջինի մէջ, «Սեպարատիզմ» չը կայ միևնոյն ազգի, ժողովրդի փշրանքների միջև, նրանք բոլորն էլ միևնոյն ընդհանուր օրգանիզմի ան-

հրաժեշտ մասնիկներն են, կոչւած աշխատելու թե թեկի յանուն ընդհանուր ու լիակատար վերածնութեան, կոչւած բարձրանալու թե թեկի համաշխարհային կուսուրական սանդուխի աստիճաններով, մինչև լաւագոյն, բաղադրի համայնակենցաղը, երբ ազգի շահը կը զուգահեռուի, կը ներդաշնակուի մարդկութեան շահի հետ...

Հինգերորդ համագումարը շեշտեց նաև, «Թէ կարող ենք այսպէս ասել, «ազգ» հասկացողութեան ծուծը, նրա իրական բովանդակութիւնը: Նա ծանրանում է ամեն քայլափոխում—Թէ իր խմբագրած «Յայտարարագիրների» *) և թէ ընդունած որոշումների մէջ—ժողովրդի աշխատաւոր ու կեղեքւած ընդհանուրութեան շահերի վրայ: այդ է կուսակցութեան կենտրոնական մտահոգութիւնը, և դա բղխում է նրա ծրագրից, նրա քսանամեայ աշխարհայեացքից:

«Գաշնակցութիւնը նախարձանդիր հայ ժողովրդի ներդաշնակ և անարգել զարգացման, պիտի պաշտպանէ մեր ազգային-կուլտուրական բոլոր հիմնարկութիւնները, պիտի հովանաւորէ ժողովրդական բոլոր իրաւունքները...

«Ժողովրդականութիւն — հիմնած Աշխատանքի գաղափարին վրայ...

«Ռամկականութեան հաստատումը միայն տուութեան փոխարէն, աշխատանքի գերիշխանութիւնը դրամի գերիշխանութեան փոխարէն»:

Ժողովուրդն է «ազգի» սուբստանցը, նրա շահերն են մեզ համար թանկ ու ներկական, նա է մեր բոլոր խորհրդածութիւնների ու ձիգերի առանցքը և ոչ այն սղորակ դասակարգերը—կղեր, աղաներ, վաշխառուներ և այլն,—որոնք, իրենց վարձկան փաստաբաններն ունենալով մամուլի, գրականութեան և ուրիշ ասպարէզներում, միշտ յաւակնել են մենաշնորհ դարձնել «ազգ» գաղափարն ու ազգային գործունէութիւնը, միշտ ձգտել են առնել իրենց «հայրական» խնամակալութեան տակ խեղճ ու սգէտ ընդհանրութիւնը, ոչ թէ նրան իրօք պաշտպանելու, նրա համար զոհաբերելու, տանջելու, այլ միայն ու միայն շահագործելու—իրենց դիրքի ու գրպանի համար—այդ ընդհանրութեան սգիտութիւնն ու աշխատանքը: Այդ տարրերի դէմ Գաշնակցութիւնը կարող է միայն մէկ նշանաբան, մէկ ընթացք ունենալ—անհաշտ կռիւ: Այդպէս է նրա բժրունումը «ազգի» մասին: Այդ կէտում նա «սեպարատիստ» է, «անջատական» անպայմանօրէն, անվերածելիօրէն:

Անջատականութիւնը, միւս կողմից, վճռականապէս դատապարտւած է պետական, քաղաքական հողի վրայ: Թէև շատոնց արդէն պարզաբանած ու հերքած՝ ընդհանուր ժողովը հարկ սեպեց, այնուամեն-

*) Տես նաև «Բրոսակ» № 9:

նայնիւ, մի աւելորդ անգամ հրապարակով յետ մղել այդ տխմար առասպելը, որ այնքան յաճախ շահագործել են հայու թեան թշնամիները և որ նորէն դուրս լողաց ժամանակաւոր մոռացութիւնից՝ Ադանայի աղէտից յետոյ.

«Գաշնակցութիւնը վճռականուպէս ետ մղելով անջատողական ձգտումները, պիտի տքնի վերակազմել երկրի քաղաքական ու անտեսական կարգերը, Օ ս մ ա ն ե ա ն պ ե տ ու թ ե ա ն ա մ բ ո Ղ Ն ու լ թ ե ա ն մ է ջ հիմնած բոլոր շրջաններու տեղական լայն ինքնավարութեան վրայ և ամրապնդւած բոլոր տարրերու դ ա շ ն ա կ ց ա կ ա ն կ ա պ ե Ր ո վ :

Յստակ ու որոշ... Դա իր վաղեմի «հաւատոյ հանգանակն» է, որ կուսակցութիւնը հարիւր ու մէկերորդ անգամը ծանուցանում է ի լուր կամաւոր խուլերի:

Ս կ զ բ ու ն ք ի յայտարարութիւնից յետոյ—տ ա կ տ ի կ ի որոշումներ:

Որոշումներ—ձևակերպւած վ ա յ Ր կ ե ա ն ի հրամայական ներշնչման տակ: Լորիզօնը՝ ամպամած բոլոր երեք պետութիւնների մէջ՝ Յ ե Ղ ա շ Ր ջ մ ա ն ա ն ց ո Ղ ա կ ա ն մ ի շ Ր ջ ա ն —ամենուրեք: Հակայեղափոխութեան յաղթանակ Ռուսաստանում, հակայեղափոխութեան նպանալիքներ թիւրքիայում ու Պարսկաստանում: Մի ահաւոր կացութիւն, որ թելադրում է յեղափոխական կազմակերպութեանը՝ արթուն հսկել շրջապատի վրայ, լարել իր բոլոր ճիգերը և միշտ չոր պահել վառօդը...

Ընդհանուր ժողովը, շեշտելով հանդերձ իր հաւատը օսմանեան սահմանադրութեան մէջ, չի անգիտանում, որ նա տասնեակ միլիոնաւոր մահմեդական ազգաբնակչութեան մի չնչին բեկորն է միայն նւաճել: Բանակի ու մտաւորականութեան մի մասը—մինչդեռ ահագին մեծամասնութիւնը դեռ անգիտակից թշնամի է նոր իրաւակարգի, դիտելով այն, որպէս մի տեսակ առանձնաշնորհում քրիստոնեաների համար:

Ի՞նչ անել, ի՞նչ տակտիկ ընդունել այդպիսի ծանր պայմաններում: Քաղաքական ողջմտութիւնը, տարրական *bon sens*-ը թելադրում է համաձայնութեան գալ—ուէակցիայի յարձակողական վերադարձը արգելելու համար—այն բոլոր կուսակցութիւնների հետ, որոնք յայտնում են անկեղծօրէն, շիտակօրէն ս ա հ մ ա ն ա դ Ր ա կ ա ն: Այդ կուսակցութիւններից զօրաւորագոյնը օսմանեան «Իթթիհատն» է, որի հետ Գաշնակցութիւնը քիչ առաջ կնքեց համաձայնութիւն—սահմանադրական ազատութիւնները ապահովելու նպատակով—առանց մի նշանախեց անգամ շեղելու իր ծրագրից, իր ազգայնական ու կուսակցական դաւանանքից: Գաշնակցութիւն և Իթթիհատ, հարկ կա՞յ ասել, շատ տարբեր են իրենց աշխարհայեացքով, պետութեան ծանրակշիռ խնդիրների իրենց ըմբռնումով: Բայց նրանց միջև կայ շփման մի գիծ—սահմանադրութեան պահ-

պանումը—որ ներկայ ալէժուփ ժամանակի առաջնագոյն, հրամայական պօստուլատն է: Այդ ժամանակաւոր համաձայնութիւնը, բնականաբար, չի կաշկանդի ազատ բնագաւտութիւնը երկուստեք: Այդ համաձայնութիւնից յետոյ ևս, Գաշնակցութիւնը միանգամայն ազատ է զգում ինքզինքը՝ բնագաւտելու և հարւածելու թէ Իթթիհատի և թէ նրա ներշնչման տակ գտնուող կառավարութեան գործողութիւնները: Ապացոյց այն որոշումները, որ ընդունել է հինգերորդ համագումարը Ադանայի առթիւ:

Ռուսաստանում—նոյն երերուն քաղաքական մթնոլորտը: Ընդհանուր ժողովը մատնանշում է իրաւամբ երրորդ Գումայի քաղաքական ոչնչութիւնը, սահմանադրական ազատութիւնների գրեթէ վերացումը... Այնտեղ ևս ծանր կացութիւնից ելնելու համար, սահմանադրական անիւը ազատ ընթացքի մէջ գնելու համար՝ բ ո լ ո Ր դ ի մ ա դ Ր ա կ ա ն կ ու ս ա կ ց ու լ թ իւ ն ն եր ի ս եր տ գ ո Ր ծ ա կ ց ու լ թ իւ ն ը յայտնում է ստիպողական մի պահանջ: Ը թ ի որոշման մէջ մի դառն շեշտ է սահում... մի դառն յիշողութիւն անցեալից: Դա կ ու ս ա կ ց ա կ ա ն եր կ պ ա ո ա կ ու լ թ ե ա ն ողբալի փաստն է Ռուսաստանի մէջ—մի ցուլատանջ իրողութիւն, որ կարելի է ասել, սկզբից ի վեր հալածել է համառուսական ազատութեան գործը: Մենք առիթ ենք ունեցել նոյն այս էջերում ծանրանալու այդ ներքին պատուհասի վրայ և մատնանշել ենք նրա մի բանի աղբիւրները, որոնցից մէկն է—գուցէ գլխաւորը—Ռուսաստանի ամենատարածւած կուսակցութեան՝ Ս օ ց ի ա Ղ դ ե մ օ կ Ր ա տ ի ա յ ի՝ դօքտրինեօրական կղզիացումը, նրա անհաշտ, յաճախ թշնամական դիրքը դէպի միւս յեղափոխական ու սօցիալիստական կուսակցութիւնները: Տարակոյս չը կայ, արդարև, որ այդ հատուածավոր աղանդաւորութիւնը մէկն է այն խոշոր պատճառներից, որոնք թուլացրին, անգամալուծեցին համառուսական շարժման ուժը, և այսօր — ուշ քան երբէք—անհրաժեշտ է դարձան անել այդ շարիքին: Բունպետութիւնները միշտ ուժեղ են եղել դիմադրական կուսակցութիւնների երկպառակութեամբ... Ահա թէ ինչու Ընդհանուր ժողովը, Գաշնակցութեան աւանդական տակտիկի համաձայն, թելադրում է արծարծել միջկուսակցային համերաշխութեան գաղափարը և ձեռք առնել միջոցներ՝ կ ու ս ա կ ց ա կ ա ն հ ա մ ա գ ո Ր ծ ա կ ց ու լ թ իւ ն ը գլուխ բերելու Ռուսաստանում:

Դա հրահանգում է—նոյն ծանրակշիռ նկատումներից չլեւելով—համաձայնութեան գալ նաև յրանում պարսիկ շատ թէ քիչ ռամկավարական տարրերի հետ: Նոյն զգաստ, րէալիստական հրահանգները—պարլամենտ ա կ ա ն գ ո Ր ծ ու ն է ու լ թ ե ա ն նկատմամբ: Ամեն տեղ պարլամենտներում, գաշնակցական

պատգամաւորները, գործելով հանդերձ հաւաքական խորհրդակցութեամբ ու պատասխանատուութեամբ, պահպանելով հանդերձ ամենասերտ յարաբերութիւն կուսակցութեան հետ, պիտի ոչխորչին պարլամենտի մէջ կօնկրեա խնդիրներու շուրջը ժամանակաւոր բլօկներ կազմելէ այն կուսակցութիւններու հետ, որոնք համեմատաբար յօտիկ են մեզ»:

Համաձայնութիւններ պարլամենտի մէջ, համաձայնութիւններ պարլամենտից դուրս:

Այդ է միակ հնարաւոր տակտիկը մի կենդանի կուսակցութեան համար, որ անխախտ պահպանելով իր ընդհանուր սկզբունքները, ուզում է միաժամանակ կանգնած մնալ իր անուշտութեան հողի վրայ... Իսկ իրականութիւնը բոլոր երեք պետութիւնների մէջ, տարաբախտաբար, զուրկ է անգամ բուրժուա-բուսական իրաւակարգի ամենատարրական երաշխիքներից, իրականութիւնը բոլոր երեք պետութիւնների մէջ դեռ համարեա աւատապետական միջնադարն է, իր խակ ու բիրտ կերպարանքով, իր վայրենի ու մարդասպան արտայայտութիւններով... Այդտեղ արդէն չէք կարող սակարկել ձեր անկցութիւնը—յանուն տարրական ազատութիւնների պահպանութեան—նոյնիսկ այնպիսի կուսակցութիւնների, որոնք թէև սօցիալական իրենց դաւանանքով սար ու ձոր հետու են ձեզնից, բայց դրա փոխարէն, պատրաստ են թուժք կանգնել հակախղափոխական, հօրդայական հոսանքների դէմ... Չափազանց պարզ տրամաբանութիւն է սա, և Գաշնակցութեան դէմ այլ և այլ կողմերից—աջից և ձախից—նետուած փայտէ սլաքները չեն կարող հասնել իրենց նպատակին:

Չարգելելով «բլօկները», ժամանակաւոր համաձայնութիւնները պարլամենտներում՝ Գաշնակցութեան Ատեանը արգելում է սակայն, որիչ կարգի իրաւախոհութիւնները Եւ նախ՝ Գաշնակցականի «մինիստրացումը»... Հրահանգուած, անշուշտ, արեւմտեան փորձերից, իմանալով, թէ ինչպէս մինիստրական կարիէրը փճացնում է գաղափարական անհասներին, անգամաւրուծում է յեղափոխական աւելներ, տանում դէպի մեղկ ու թուլամորթ պատեհապաշտութիւն և պառակտման սաղմեր մտցնում կազմակերպական շարքերի մէջ—ընդհանուր ժողովը վարեց համաձայն Ինտերնացիոնալի Պարիզեան Համագումարի (1900 թ.) որոշումին, նա արգելեց իր անդամներին՝ ստանձնել մինիստրական պաշտօն սովորական, նորմալ ժամանակ, բայց այդ արգելքը բացարձակ չէ. «Յեղափոխական բացառիկ, անցողական շրջաններում, կուսակցութեան համաձայնութեամբ, Գաշնակցական ընկերները կարող են մանել ժամանակաւոր կառավարութեան մէջ, դադարելով այն օրից կուսակցութեան գործօն անգամ լինելուց»:

Արջպագանդի խնդիրը ևս կարեւոր տեղ բռնեց ԸԺ-ի վիճաբանութեան մէջ:

Գաշնակցութեան գերագոյն Ատեանը հանդիսաւորապէս ծանուցանում է, որ սահմանադրական բէժիմիները—քանի այդ վերջինը կը յարատեւ անխախտ, անասան — դաւադրական գործունէութեան ձեւերը այլ ևս կորցնում են իրենց գոյութեան իրաւունքը: Կուսակցութիւնը հրաժարուում է դաւադրական գործելակերպից, բունի միջոցների կիրառումից և իր տակտիկի ծանրութեան կենտրոն է դարձնում՝ խաղաղ, օրինաւոր պրօպագանդը:

Արջպագանդը, գրաւոր և բանաւոր, թերթերով, բրոշիւրներով ու հրատարակային դասախօսութիւններով: Ո՞վ չը գիտէ, որ խօսքի ու մամուլի ներկայ թէկուզ և սահմանափակ ազատութեան շրջանում, պրօպագանդը զօրաւորագոյն միջոցն է տարածելու գաղափարները և կազմակերպութեան ցանցերը ժողովրդի լայն խաւերի մէջ: Եւ դա պէտք է լինի մեր բոլոր մարմինների հիմնական մտահոգութիւնը: Շատ աղքատ ենք կուսակցական գրականութեամբ: Ուրիշ առաջագէտ երկրների կուսակցութիւնները նրա վրայ են հիմնում իրենց աճումն ու հմայքը, նրանով են դառնում մի տեսակ պետութիւն պետութեան մէջ: Կեց մօտ, Գաշնակցական շրջաններում, առհասարակ շատ չի խրախուսել գրաւոր ու բանաւոր պրօպագանդի գործը, երկար ժամանակ նա նոյնիսկ գրեթէ արհամարհուած է եղել: Իբրև երկրորդական, երրորդական մի զբաղմունք... Երբեմն այդ տեսակէտը իր արգարացումն ունէր—այն տենդային ու արհաւիրալի շրջանում, երբ կազմակերպութիւնը հարկադրուած էր իր մարդկային ու զբաղմունքի, իր մտաւոր ու հոգեկան ամբողջ պաշարը ծախսել կուսի հրատապ անհրաժեշտութեան վրայ: Բայց այսօր, երբ այդ սարսափելի անհրաժեշտութիւնը մասամբ արդէն վերացած է, պրօպագանդը, գործի ու գաղափարի խաղաղ, անդուլ սիստեմատիկ պրօպագանդը պիտի ստանայ առաջնակարգ կարեւորութիւն: Անհրաժեշտ է, մանաւանդ, կուսակցական մամուլի ու գրականութեան ամբողջ ուժութիւնը, ներդաշնակութիւն և դրա համար միակ միջոցն է դնել բոլոր հրատարակիչ մասնախմբերը մշտնջենաւոր փոխադարձ յարաբերութեան մէջ:

*

Ահա վերջապէս, ինքն ապաշտպանութեան ցաւոտ հարցը, Գաշնակցութեան ժողովի առջև: Գեռ ևս, աւաղ, նա պահպանում է իր հրատապ այժմեութիւնը, դեռ չի հասել ժամանակը, երբ կարելի է դնել սուրը պատեանում...

Ռէակցիան, ինչպէս ասացինք, տակաւին ուժեղ է թէ թիւրքիայում, թէ Ռուսիայում և թէ Իրանում, պատրաստ ամեն տեղ—կրօնի ու այլ «սրբութիւնների» անունով—Բարդուղիմէոսեան գիշերներ սարքել, ուր հայ ժողովուրդը միշտ պիտի լինի քաւութեան նոխազ...

Ի՞նչ անել:

Ընդհանուր ժողովը որոշում է, որ ժողովուրդը պէտք է իր ուսերի վրայ առնէ իր հաւաքական պաշտպանութեան գործը:

Հարկ կա՞յ բացատրելու, որ դա միակ բնական ու տրամաբանական որոշումն է, աւելի բան արգարացի, նպատակայարմար ու հարկադրիչ: Հայ ժողովուրդը — պէտք է ցաւ ի սիրտ խոստովանել — մինչև օրս հաւաքականօրէն չի ցոյց տւել նախաձեռնութիւն ու կորով իր այդ կարգինալ պահանջի դիմաց: Հայ ժողովուրդը մինչև օրս — թէ Թիւրքիայում և թէ նոյնիսկ Անդրկովկասում — գուցէ աւելի Փատալիստ է եղել այդ խնդրի մէջ, գուցէ աւելի ճակատագրապաշտ, բան իր հարեան մահաբազանները: Տագնապի օրերին՝ անհոգ ու ինքնուրուի օրերին՝ թոյլ, անվճռական: Հարկաւոր է եղել միշտ կուսակցութեան ինքնիշխանութիւնը նրա գործօն միջամտութիւնը, երբեմն նոյնիսկ նրա մտրակը՝ այդ հոյլ չինական անշարժութիւնը ցնցելու համար, նրան դէպի գործ ժղելու համար: Թիւրքիայում — աւելի ինքնուրու, բան Ռուսաստանում... Դա մի խոր, աղէտալի վէրք է հայկական օրգանիզմի վրայ, մի վէրք, որի վրայ ստիպած ենք միշտ անդրադառնալ, որի առթիւ այնքան ցաւագին հաւաք ենք արձակել քսան տարուց ի վեր և այսօր դարձեալ, թուում է թէ ոչինչ չենք սովորել անցեալից, պատմութիւնից...

Կազմակերպութիւնը, որքան էլ լինի նա ժողովրդի ծնունդ, որքան էլ ուժեղ, տարածւած — նա ժողովուրդ չէ: Կազմակերպութիւնը — ինչպէս յայտնում է նրա գերագոյն Ատեանը — վտանգի առեւ հրահրակ կը գայ իր ամբողջ ուժով: Բայց այդ հանդիսաւոր յայտարարութիւնը թող չ'ամրացնէ մեր գանգաւորներին անշարժութեան իրենց դոգմի մէջ, թող չը ջլատէ հանգրստացուցիչ օրօրներով նրանց կորովի ու նախաձեռնութեան թափերը: Ժողովուրդը — հազարաւոր անգամ կրկնել ենք այստեղ — ինքը պիտի հոգայ իր գոյութեան առաջին հոգսը, պիտի պատրաստէի, զինելի ու մարզելի, սեղմէ իր շարքերը... Այդտեղ է միակ գրաւականն ու ապաւենը՝ միշտ հնարաւոր ու անհաւոր պատահականութեանց հանդէպ:

Ժամանակ միայն, երբ գոյութիւն կ'ունենայ մի ազգային պարլամենտ և մի սահմանադրական ըէժիմ, երբ կը տարածուի արդարութիւնն և կ'իրագործուի հաւասարութիւնը:

Որովհետև ժողովրդի վստահութիւնը մինչև մի աստիճան իր միջից ընտրած պատգամաւորների վրայ է ոչ մի ժամանակ նա չի կարող վստահել մինիստրութեանը և ինքը հանգիստ նստիլ, ինչպէս այդ լինում էր անցեալներում, և այդպիսով նա կարող էր ձեռքից թողնել գործերի ղեկը, ուստի նախանձախնդիր հայրենասէրի համար անհրաժեշտ է ունենալ միշտ «մ ու ջ ա հ ի տ *» անունով մի մարմին, որը կը պահպանէ սահմանադրութեան հաստատութիւնը և ազգային պալատը, և զոհելով իր կեանքը ու ինչքը, ամեն ճիգ ու ջանք թափելով կը պաշտպանէ իր հայրենիքը և կը տարածէ արդարութիւնը: Ուրեմն՝ մուշահիտների մի կուսակցութեան գոյութիւնը Պարսկաստանում, մանաւանդ սահմանադրութեան օրերում, անպայման պէտք է և անհրաժեշտ: Այդպէս էլ լինում է եւրոպական և ասիական ամեն քաղաքակիրթ պետութիւններում, որ զանազան անունների տակ կազմում են կուսակցութիւններ և ամեն տեսակ զոհաբերութիւններով գիշեր ու ցերեկ աշխատում են տարածել արդարութիւնը, պահպանել պարլամենտը և իրագործել իրենց վեճ նպատակներն ու վսեմ բաղձանքները:

Ղուրանի սուրբ խօսքերն ու հոգևոր պետերի տւած վճիռները արդէն ապացոյց և հաստատութիւն են այն անձանց ֆունկցիայի և աստիճանի բարձրութեան, որոնք պատիւ են ունեցել մտնել այդ սրբազան շրջանի մէջ և փառք են համարել կրել այդ փառաւոր անունը: Մեծն Աստուած իր սուրբ գրքի մէջ այդ սրբազան կուսակցութեան մասին հրամայում է. «Սուրբ պատերազմի համար կուսակցների աստիճանը շատ աւելի բարձր է, բան թէ նրանց, որոնք որ տանը նստած են և կուր չեն գնում»: Ս. Գրքի այս խօսքերը նշանակում են, որ հայրենիքի համար կուսակցների պաշտօնը բաւական բարձր է և նպատակը վսեմ: Ուրեմն այս կուսակցութեան մէջ մտնել ցանկացողները, մասնակցելուց առաջ պարտաւոր են իմանալ թէ ի՞նչ է նշանակում մուշահիտ բառը և շատ լաւ հասկանալ ներքեւում բացատրած կուսակցութեան ծրագիրը, որպէսզի այդ գեղեցիկ պատույզ գեղատը իր սիրուն հասակին լաւ սազ գայ: Նախ պէտք է իմանալ, թէ ինչ է մուշահիտ բառի իմաստը և ի՞նչ է կուսակցութեան նպատակը: Առսակցութեան նպատակն ու նրա ծրագիրը բացատրում են հետևեալ յօդուածներով:

- 3 օր. 1 — Ազգային խորհրդի (պարլամենտի) գոյութիւնն ու նրա յարատեւութիւնը Պարսկաստանում:
- 2 — Ընդհանուր բեւարկութիւն առանց խտրութեան դասակարգի, ցեղի, աղքատի և հարստի:
- 3 — Գաղտնի և ուղղակի բեւարկութիւն:
- 4 — Ընտրութիւնը տեղի կունենայ ազգաբնակչութեան թւի և գլխահամարի համեմատ, ոչ դասակարգային հաշուով:
- 5 — Ազատութիւն հետևեալ եօթ բաների.
 - ա) Ազատութիւն գրէի և մամուլի, այսինքն ամեն ոք

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

«ՄՈՒՋԱՀԻՏՆԵՐԻ ՍՐԲԱՋՈՒՆ ԿՈՒՍԿՈՒԹԵԱՆ» ԾՐԱԳԻՐԸ
«ՄՈՒՋԱՀԻՏՆԵՐԸ ԻՐԱՆԵԱՆ»
(Բնագրի քարգւ.)

Ամեն մի մարդու սրբազան և անհրաժեշտ պարտականութիւնն է պահպանել ազգի պատիւն ու համարումը, պաշտպանել հայրենիքը և վերացնել անարդարութիւնը: Այս բոլորը իրականութիւն կը ստանայ այն

* Մուշահիտ նշանակում է սուրբ պատերազմի համար կուսակցութիւն: Ծ. թ.:

կարող է գրել և հրատարակել գրքեր, լրագիրներ և բրոշուրներ, որոնք նպատակ կունենան պաշտպանել ազգի և երկրի շահերը, ժողովրդի բարեկեցութիւնը և նրա զարգացումը, պետութեան առաջադիմութիւնը, հարստահարութիւնն ու անարդարութեան վերացումը, զեղծումների երևան բերելը: Ոչ ոք իրաւունք չունի արգելել կամ դադարեցնել այդպիսի գրեւծները, բացի այն դէպքում, երբ նրանք անհամապատասխան կը լինեն մամուլի ազատութեան վերաբերեալ ազգային ժողովի մէջ խմբագրած կանոններին:

բ) Ազատութիւն խօսքի, այսինքն հանրագումար հարցերի, հայրենիքի իրաւունքների և սահմանների պաշտպանութեան և քաղաքացիների ու հարստահարիչների զեղծումների վերաբերեալ, ով որ ինչ գիտէ կարող է խօսել, արձակ համարձակ և ոչ ոք իրաւունք չունի նրան արգելել կամ որևէ պատժի ենթարկել:

գ) Ազատութիւն ժողովների ու ակումբների, այսինքն հասարակութիւնը, հիմնական օրէնքը պահելու պայմանով, երբ և ուր որ կամենայ, կարող է համախմբել: Խօսել այն հարցերի մասին, որոնք վերաբերում են ազգի և պետութեան քաղաքական, ու տնտեսական գործերի բարելւման և իրենց արդիւնաբերութեան զարգացման քաղաքացիների և պետութեան կողմից ոչ մի արգելք չպիտի լինի:

դ) Ազատութիւն խղճի և գաղափարի, այսինքն անտեսական և քաղաքական և պօլիտիկայի վերաբերեալ գործերում, ամեն ոք կարող է ազատ կերպով իր միտքն ու կարծիքներն յայտնել և ոչ ոք իրաւունք չունի բռնանալ կամ արգելք լինել:

ե) Ազատութիւն անձի, այսինքն առանց բնութեան և դատաստանի ենթարկելու, կառավարութիւնը չի կարող բռնութիւն գործ գնել մէկի անձի կամ բնակարանի վրայ:

զ) Ազատութիւն ընկերութիւնների և միութիւնների (սինդիկատ), այսինքն ժողովրդի ամեն մի դասակարգը, իր անտեսական և քաղաք. գործերի ընթացիկ համար, կարող է ժողովներ ու սինդիկատներ կազմել և այդ սինդիկատները կը մնան անձեխնամելի կառավարութեան կողմից:

է) Ազատութիւն գործադուլների, այսինքն բանւորներ ու գործաւորներ, իրենց անտեսական և կեանքի պայմանները բարելւելու համար, կարող են ամեն ժամանակ գործադուլ անել. պետութիւնն, իրաւունք չունի բռնութիւն գործ գնել և արգելքներ յարուցանել:

6—Ուսումը ձրի, պարտադիր և ընդհանուր պիտի լինի: Պետութիւնը պարտաւոր է քաղաքներում և գիւղերում տարրական, միջնակարգ և բարձր դպրոցներ բացելով, Պարսկաստանի զաւակներին, առանց դասակարգի խտրութեան ձրի ուսում տալ և ուսումը պարտադիր անել:

7—Պետութիւնը պարտաւոր է արքունի գիւղերն ու կալաւածները, առանց փոխարինութեան գրաւել և միւս կալաւածատէրերի, նրանց ապրուստի համար պէտք եղածից աւելորդ գիւղերն ու կալաւածները չափաւոր արժէքով գնել և բաշխել բնակիչների և հողագործների մէջ, նրանց թւի համեմատ:

8—Պետութիւնը պարտաւոր է աղքատների, խեղճերի և հիւանդների համար ամեն քաղաքում կառուցանել և պատրաստել որբանոց, անկեղանոց և հիւանդ-

դանոց, որպէսզի նրանք չմեռնեն սովից և անխնամ մնալուց:

9—Տուրքերն ու հարկերը պիտի դրւին կապիտալի և հարստութեան համեմատ և ոչ գլխահարկի և թւի չափով, այսինքն պետական տուրքերը և հարկերը պիտի առնուին առևտրական և կալաւածային շահերից, այնպէս որ նրանք, որոնք առևտուր և կալաւած չունին տուրքից ազատ պիտի մնան:

10—Ազգային և պետական խորհուրդը մի հատ է լինելու (մի պալատ): Այդ պալատից բացի սենատ կամ ուրիշ պալատ չպիտի լինի:

11—Զօրքի և զինւորների թիւը որոշւած և սահմանափակ լինելու է: Ամեն մի իրանցի գրեւելու է զինուոր: Պետութիւնը պիտի հիմնէ զինւորական դպրոց, ուր ժողովրդի ամեն դասակարգի զաւակները ուսանելուց և 18 տար. հասակում 2 տարի ժամանակով զինավարժութիւն ու զինւորական արհեստը սովորելուց յետոյ, պիտի պարապին իրենց գործով, որպէսզի օտարները, երկրի սահմանների և իրաւունքների վրայ ստնձգութիւն արած միջոցին, նրանք կռիւ տարով և ամեն տեսակ զոհաբերութիւն անելով, կարող լինին պաշտպանել հայրենիքի իրաւունքներն ու նրա սահմանները:

12—Բանւորների և գործաւորների աշխատութեան միջոցը պիտի լինի ութ ժամ, ոչ աւելի:

13—Պատասխանատու մինիստրութիւն և նրա ընտրութիւնը պարլամենտի կողմից:

Առայժմ այսքանով բաւականացինք: Աստուծով, ապագայում, ըստ պահանջման ժամանակի և ըստ արթնութեան իրանցիների, ուրիշ յօդաւածներ ևս կ'աւելացուին: Կեցցէ կուսակցութիւն մուջահիտների: Կեցցէ Ազգային ժողով:

15 արքան 1325
Մուսս

II

ԻՍԼԱՄ ԲԱՐԵՆՈՐՈԳԻԶՆԵՐԻ (ՅԵՂ.-ԵՐԻ) ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ
(ԻՍԼԱՄԻՈՒՆԸ-ԱՄԻԹԻԻՆ)
(Բնագրի քարգ.)

23 մօհարէմ 1326 Հէջրի թիւ

Յանուն գթած և ողորմած Աստուծոյ,
Հազար ու մի նեղութիւններից յետ, երբ մեծահոգի մարդկանց ջանքերով վերացաւ այն գարշելի միապետական և բացարձակ իշխանութիւնը, որը ամեն տեսակ բռնութիւնների և անարդարութիւնների մի աղբւր էր, և յուսալով, որ ընդհանուր ազգաբնակչութիւնը, աղքատ կամ հարուստ պիտի կարողանայ արդարութեան և հաւասարութեան ակնադիւրից ջուր խմել երևան պիտի գայ իսկական իսլամութիւնը, եղբայրութիւնն ու միութիւնը, թշնամիներն ու հակառակորդները պիտի հեռանան հայրենիքի հողից և վերջապէս պիտի ազատուին գիւղացիները կալաւածատիրոջ ու կալաւածատէրը՝ միապետական կառավարութեան կեղեքումներից, մենք դրեցինք սահմանադրութեան հիմքն այս երկրի մէջ:
Մեր պատգամաւորներն ու հաւատարմատարները մայրաքաղաք ուղարկեցինք և նրանց հրամաններին էինք սպասում, երբ մի խումբ խոզարարներ, առիթ ձեռք

բերելով նրանցից ամեն մէկը մի պատրւակով, ամեն միջոց ձեռք առնելով սկսեց շփոթութիւն առաջ բերել երկրի մէջ և խանգարել ժողովրդի հանգստութիւնը: Ամեն բաղաբուրդ և գաւառում այդ չարագործները հասարակութեան անգործութիւնը վրդովեցին և ամեն տեղ արիւնյեղութեան պատճառ դարձան. գործերի ղեկը խելացի և հաւատարիմ պատգամաւորների ձեռքից դուրս գալով անկրօն, չարագործների ձեռքն անցաւ:

Այդ տգէտ չարասերները մի բանի ամուսայ մէջ ազգաբնակչութեան գլխին բերեցին կրկնապատկը այն տառապանքների, որը նա տարիների ընթացքում կրել էր նախկին միապետականների անարդար գործերի պատճառով: Մինչդեռ իրենց ձեռքում էր գտնուում միապետական բռնակալ կառավարութիւնը, ազգային փլուզում և բարձր պաշտօնեաներին էին մեղադրում նորն յանցանքով և նրանց տանջանքների ենթարկելով դրամներ էին շորթում:

Արդարութեան և հաւասարութեան պաշտպանները, որոնք միշտ մարդկային խաղաղութիւնն ու հանգստութիւնն էին կամենում, այս անխելանութեան և խլրտուամների միջոցին յետ բաշտեցին և սպասում էին այն բանին, որ գուցէ մի օր խառնակիչները կըզգան իրենց սևալ քայլը կամ թէ կառավարութիւնը իր բարեկարգիչ իշխանութեամբ այս չարագործներին կը սանձահարէ: Բայց աւա՛ղ, ոչ վերջիններս իրենց արարքներից ամաչեցին և ոչ էլ կառավարութիւնը կարգը վերահաստատեց, մինչև որ գործը այնտեղ հասաւ, երբ սահմանադրականները վշտացած, Աստուծոց խնդրում էին նախկին միապետութիւնը: Այս մարդիկ սահմ. հիմքը խախտած և ազգաբնակչութիւնը վհատած տեսնելուն պէս, վերանորոգիչ անունով ամեն կողմից հաւաքեցին և ճիգ ու ջանք թափելով, լուութեան դատապարտած լեզուներն բաց արին և թող գրիչները շարժել սկսեցին: Այս համառօտ կանոնագիրը ի լոյս ընծայելով, բոլոր արդարասէր մարդկանց իրենց հետ մասնակցելու ու համախոհ լինել հրաւիրեցին:

Բարձրեալն Աստուած վկայ է, որ այս բարենորոգիչ (յեր.) ասւած մարդիկ պատկանում են Զաֆարի դաւանութեան և պաշտպան են արդարութեան ու իսլամութեան: Նրանց արդարասիրութիւնը հիմնւած է յշարիաթի“ (ղուրանի օրէնքների) վրայ և այդ սկզբունքով սիրում են հաւասարութիւն և ցանկանում են սահմանադրութիւնը: Նրանք չունին անուն հանելու փառասիրութիւնը և ոչ էլ թշնամութիւն ու քէն ոչ ոքի հետ, նրանց սուրն է ճշմարտութիւնը և մարդկայնութիւնը և զէնքն է՝ ծառայել ազգին անկեղծութեամբ: Նրանք դաւանում են իսլամ կրօնը և հայրենիքը նրանց համար սուրբ է ու նւիրական, հայրենիքի զաւակներն էլ նրանց եղբայրներն են: Իրենց թագաւորին հնազանդ են և հլու հպատակ նրա հրամաններին, բայց այն դէպքում, երբ նրանից չի ծագիլ ոչ մի գործ, որ հակառակ լինի շարիաթին և սահմանադրութեան: Նրանք կրօնականներին (իւլէմա) համարելով Աստուծոյ մարգարէի յաջորդներ, նրանց պաշտում են և յարգում, բայց այն դէպքում, երբ սրանք արդարութեան և ճշմարտութեան ճանապարհովն են գնում և ժողովրդի կուրութիւնից ու նրա տգիտութիւնից չեն օգտուում, և աղքատութեան ու առաքինութեան զգեստ

հագած՝ գերագաս են համարում ծառայել Աստուծն, քան ստրուկ լինել մարդկանց:

Նրանք բարձր պաշտօնեաներին, նախարարներին, բաղաբապետներին և հասարակաց պաշտօնեաներին ճանաչում են իրենց պետ և գլուխ, բանի որ նրանք իրենց պաշտօնավարութեան մէջ կը գործեն արդարութեամբ ու ճշմարտութեամբ:

Բէֆօրմատօրները յարգում են կալւածատէրերին ու հարուստներին, որոնցից է կախւած երկրի յառաջադիմութիւնը և նրանց համարում են պիտանի անձնաւորութիւններ, այն պայմանով, որ այդ կալւածատէրերը ազգաբնակչութեան հանգստութեան և երկրի բարգաւաճման գործի մէջ կը գործեն գիտութեան և արդարութեան օրինաց համաձայն, և դրամատէրերը իրենց դրամները կը ծախսեն երկրի յառաջադիմութեան, գործարանների հիմնադրութեան և ազգաբնակչութեան կրթութեան համար: Արհեստաւորները ազգին ծառայութիւն կը մատուցանեն, եթէ նրանք արհեստները կատարելագործելու աշխատին: Պատուաւոր վաճառականները երկրի հարստութեան հիմքն են համարում, եթէ եւրոպական կեղծ ապրանքների միջնորդները չեն հանդիսանում և հայրենիքի վաճառքները արտասահման տանելով լաւ արժէքի են հասցնում: Հայրենի ազատութեան համար կուռղները, որոնք առանց վարձատրութեան և փոխարինութեան սպասելու, ազգաբնակչութեան իրաւունքները յետ պահանջելու համար զոհում են իրենց կեանքն ու գոյքը, բոլոր սահմանադրականների սիրելիներն են ու վերանորոգիչների պաշտպանութեան տակ են գտնուում:

Իսկ այն անձինք, որոնք մ ու ը Վ հ ի տ (ազգային զինուոր) պատուաւոր անունը իրենց վրայ վերցնելով, մարդասպանութեամբ և աւարաւորութեամբ են պարսպում, մարդկանց հանգստութիւնը խանգարելով, մէկից հրացան, միւսից դրամ են պահանջում և առանց պատճառի ազգաբնակչութեանը զրպարտելով, կտորածի պատճառ են լինում, այդպիսիները թելագորդն ու թելագրուողը, ինչ դասակարգի էլ պատկանելու լինին, Աստուծոյ և մարդկանց մօտ զզւելի արարած համարելով, ամեն մի անհատի պարտականութիւնն է նրանց ոչնչացնել ու անհետացնելը:

Բարենորոգիչների պարտականութիւնն է, նախ՝ հսկել, որ թէհրան ուղարկւած մեր պատուաբժան պատգամաւորների աշխատութեամբ տրւած և Ն. Ա. Վ. Ն. ի կողմից վաւեցրած կանոնները, առանց խտրութիւն դնելու աղքատի ու հարուստի մէջ, գործադրելն արդարութեամբ ու հաւասար կերպով. զարկ տալ կրթական գործին և ամեն հաշտութեամբ ու սահմանադրական սկզբունքի համաձայն պահպանել հայրենիքի՝ ազգաբնակչութեան իրաւունքներն ու վերացնել անխելանութիւնը և վերահաստատել ապահովութիւնը:

Այսքան համառօտ ծրագիրը հրատարակելուց յետոյ, մեզ հարկաւոր է մի բանի խօսք էլ ասել կուսակցութեանս պատկանող հարուստների պարտականութեան մասին:

Ոչ մի խոհական և ուշիմ մարդ կանգիտանայ այն, որ ամեն մի ազգի առաջադիմութիւնը եղել է գիտութեամբ և այդ գիտութեան շնորհիւ միայն մարդիկ կարողացել են ձեռք բերել ապահովութիւն, հարստու-

Թիւն և իշխանութիւն, նոյնպէս անհերքելի է այն փաստը, որ մեր երկիրը սահմանադրական անունը իր վրայ առնելուց ու ազգային զգացմունքը մի քանի մարդկանց մէջ արթնանալուց յետոյ, ամեն ոք մի միտք յղացաւ, և ամեն գլխից մի ձայն բարձրացաւ: Մենք, որ մեզ «իսլամական բարենորոգիչներ» ենք անւանում, մեր նպատակն է մրջիւնի նման մեր ծառայութիւնը, իբրև համեստ պարգև նւիրել հայրենիքի զաւակներին և ճշմարիտ սահմանադրականներին:

Եւ ահա ինչ է մեր խօսքը:

Հայրենիքի մէջ տիրող շփոթութեան չափն ու սահմանը անցաւ և բարեղոնեան խառնակութիւնը ամեն տեղ երևան եկաւ: Մեր հայրենիքի ազգաբնակչութիւնը երկու տեսակի է բաժանուում—միապետական ու սահմանադրական: Սահմանադրականների մասին է մեր խօսքը!!! Միապետականների հետ գործ չունինք: Նրանք՝ սահմանադրականներն նոյնպէս երկու տեսակ են: Առաջինը՝ իսկական սահմանադրականներն են, որոնք երկրի և կրօնքի վարկն ու պատիւը պաշտպանելով հանդերձ, գիտեն երկրի գաղտնիքներն ու նրա գործերը և այդ դասակարգը, հին և նոր միապետութեան օրերում և ներկայումս եղել է միշտ ճնշած ու հալածւած: Երկրորդ սահմանադրականները անւանական են, միայն սահմանադրութեան անունն են լսել բայց չը գիտեն, թէ ինչ է սահմանադրութիւնը և բոլորովին անգիտակցաբար պահանջում են սահմ. և պէտք ունին ուսուցչի և ղեկավարի: Ուայ մի երրորդ տեսակը, որոնց մասին չպիտի խօսինք:

Վերջապէս այս կազմակերպութեան հիմնակէտն է արդէն ձեռքից ելած գործի ղեկը կրկին ձեռք բերել, երկրորդ տեսակի սահմանադրականներին առաջնորդել դէպի ուղիղ ճանապարհ, նրանց հասկացնել բուն նպատակը, նրանց արգելել շարունակելու այն ազգակործան և մեր կրօնի ու հաւատի համար կորստաբեր շփոթութիւն ու խռովութիւնը և ցաւակցել ազգի ներկայ վիճակին, ուր երկիրը, առաջնանից հազար անգամ անելի մեծ վտանգի ենթարկւած է: Գուցէ Աստուծային կարողութեամբ և մինչև վերջին շունչ թափած մեր ճիգ ու ջանքերի շնորհիւ, երկիրը կարողանայ խաղաղ դրութիւն ստանալ և ձեռք բերել սահմանադրութիւնն այնպէս, ինչպէս ձեռք բերել են մեծ պետութիւնները:

Մեր բարենորոգիչների հիմնակէտը պիտի լինի ազգի և կրօնի վարկն ու պատիւը: Այն մարդը միայն կարող է մտնել կուսակցութեանս մէջ ով որ ունի այդ պատւոյ զգացմունքը և որի երակներին մէջ հոսում է մաքուր արիւն:

Բարենորոգիչներ պայմանագիրը—

Յօդ. առաջին. — Այս պայմանագիրը կուսակցութեանս բոլոր անդամներին՝ կառավարիչ, անդամակից և կուսակց. հետևողներին է վերաբերում: Կենտրոնական կառավարիչներն ունին առանձին պայմանագիր, որի մէջ յատկապէս որոշած է նրանց պարտականութիւնները: Իսկ այս բովանդակում է այն կանոնները, որոնք վերաբերում են ընդհանուր մասնակցողների պարտաւորութիւններին:

Կուսակցութեանս ուղղութիւնն է պաշտպանել հայրենիքը, տարածել կրթութիւն և սահմանադրութիւն,

ծառայել իսլամական աշխարհին և արգելք լինել ազգի և հայրենիքի դաւաճանների հարստահարութիւններին:

2. Կազմակերպութեանս անդամակիցները պիտի լինին պատւաւոր անձինք և ոչ մեղադրւած յանցագործութեամբ կամ ոճրագործութեամբ: Չպիտի ընդունուի կազմակերպ. մէջ նա, որ հակառակ այս պայմանների կամենում է անդամակցիլ այս մարմնին, բացի այն դէպքում, երբ նա կը տայ կատարեալ ապահովութիւն, կերպի ղուրանով, կը զղջայ իր անցեալ գործերից և կը տայ մի երաշխաւոր կամ թէ ապահովութեան սնդուկին կը յանձնէ մի գումար, և վերջապէս կ'անէ այն, որ պարտ ու պատշաճն է, որպէսզի կազմակերպ. նրանից ապահով լինի:

3. — Կազմակերպ. պարտականութիւնն է վերացնել միապետական կառավարութիւնը և խռովարարի առաջացրած անկարգութիւնը, ով որ լինի անկարգութեան հեղինակը՝ նախկին միապետականներից կամ թէ այն, որ իրեն սահմանադրական է համարում: Այդ մարդկանց մէկից անկարգութիւն ծագած միջոցին «կազմակերպութեան» պարտքն է նրան հրաւիրել դէպի ուղիղ ճանապարհ, խրատելով, կամ այն ամեն միջոցներով, որ ժամանակի պահանջն է:

4. — Այն որ կը դաւաճանէ կազմակերպութեան՝ ղեկավար կամ անդամակից՝ կը զրկուի անդամակցութիւնից: Գաւաճանութիւնը կայանում է այս բաներում.— գաղտնիքը յայտնել դրսերում, դրամ կորզել մարդկանցից, կաշառակերութիւն, ստախօսութիւն կամ՝ բողոքել այն, ինչ որ պէտք է մերկացնել: Ղեկավարների պարտականութիւնն է պատժել յանցաւորին և որոշել նրա պատիժը:

5.— Կազմակերպ. անդամակցողները ուրիշ նպատակ չպէտք է ունենան, եթէ ոչ ծառայել հայրենիքին, պահպանել անկախութիւնը և ուժ տալ իսլամութեանը: Ով որ ունի պատւի զգացմունք, պարտաւոր է ըստ չափու կարողութեան չննայել ոչ մի զոհաբերութիւն, և մարդկանց ուղիղ ճանապարհի առաջնորդելու համար, պարտաւոր են օգնել նիւթապէս, ֆիզիքապէս, գրչով, գործով, խօսքով ու խրատով: Այսպիսիները, բացի ազգի պատւի բարձրացումը և հայրենիքին ծառայելը, չպիտի ունենան և ուրիշ ոչ մի ակնկալութիւն: Մինչև անգամ կարող անձինք, իհարկին և այն նւիրական գործի յաջողութեան համար, պարտաւոր են չինայել իրենց աջակցութիւնը:

6.— Ինչպէս որ 5-րդ յօդուածում յիշեցինք, հարուստ և կարողութեան տէր մարդիկ, ոչ մի վարձատրութիւն չպիտի սպասեն, այլ և նրանք, որպէսզի գործերը չը կանգնին, պարտաւոր են օժանդակել իրենց նպաստներով մի բանի գործերում, որպիսիք են. — ծրագրների հրատարակութիւնը և արժանաւոր ծառայողների թոշակների վճարումը:

7.— Կազմակերպ. պաշտպան է մարդկութեան: Եթէ նա ձանաչում է մէկին, որ հարստահարած, կարօտ և վերին աստիճանի չքաւորութեան է մատնւած, նա չպիտի վրանայ դրամական նպաստներով օգնել նրանց այնչափով, որ հնարաւոր է և որ սնդուկի միջոցները ներում են:

8.— Եթէ ղեկավարներից կամ անդամներից մէկը, մեր այս գործին վերաբերեալ որևէ արտաքոյ կարգի ծախքի պէտք ունենայ, վարչութիւնը պարտաւոր է վճարել և

միացեալ ժարմինը (կազմակերպ.) պարտաւոր է օգնել իր կարողութեան չափով:

9—Եթէ ղեկավարներից կամ անդամներից մէկը, բնական մահով մեռնելու լինի կամ հայրենիքի համար մարտիրոսանայ, բոլոր միւս անդամակիցների պարտքն է նրա ժառանգներին պաշտպանել և դրամական նպաստ տալ, եթէ նրանք չբաւար են:

10—Վարչութեան անդամներից ոչ մէկը իրաւունք չունի խառնել քաղաքական և պետական գործերին և իր տգիտութեամբ վրդովել խաղաղութիւնը, այլև ստորագրեալների պարտականութիւնն է իրենց հասկացածի և տեսածի մասին տեղեկութիւն տալ խմբապետներին, սրանք ներկայացուցիչներին և վերջիններն էլ կառավարիչներին: Ամեն տնօրինութիւն կը լինի կառավարչի կողմից և նրա ամեն մի առաջարկը կընդունուի և կը գործադրուի անդամների կողմից: Անդամակիցներին թոյլ չի տրուում միջամտել ոչ մի գործի մէջ, բացի այն անհրաժեշտ գործում, ուր հարկաւոր է հաշտեցնել երկու հակառակ կողմերը, որպիսին մինչև կենտրոնին հասնելը, կարող է անկարգութիւն և շարիք առաջացնել, և այս դիպակում, ամեն ոք իր կարողութեան չափով պարտաւոր է այդ շարիքների առաջն առնել:

11—Ղեկավարները պիտի մնան բոլորովին անծանօթ և բացի իրենց ներկայացուցիչները, ոչ ոք նրանց չպիտի ճանաչէ: Ստորագրեալներից այն, որ այդ բանով հետաքրքրուում է, պատժի կ'ենթարկուի: Եթէ անդամներից դուրս մէկը հետաքրքրութիւն ցոյց տայ նրանց ճանաչելու համար, այն որ այդ գիտէ, պարտաւոր է յայտնել վարչութեան, որպէսզի հետաքրքիր անձը ստանայ իր արժանի պատիժը:

12—Վուսակց, անդամներն ու համակրողները իրենց չպիտի ճանաչեցնեն, բացի հարկը պահանջած դէպքում: Նրանց կը տրուի պէտք եղած նշանը, որը ցոյց կը տան պէտք եղած դէպքում:

13—Օտարահպատակների վերաբերեալ գործերում, պէտք է վարել խոհեմութեամբ և առիթ չտալ որևէ գժտութեան և բարեկամութեան խախտելուն:

14—Պէտք է պաշտպանութիւն և ակնածութիւն ցոյց տալ օտար ազգերին և դէպի նրանց, որոնք պարսից հպատակ են, քանի որ նրանք ոչ մի դաւաճանութիւն չեն գործել մեր հայրենիքի դէմ:

15—Կառավարիչ թէ ստորագրեալ, երբ մի անգամ խոստում անելուց յետոյ, կամենում է հրաժարուել անդամակցութիւնից, պարտաւոր է նորից խօսք տալ, որ կազմակերպ. գաղտնիքները ոչ ոքի չյայտնէ: Հակառակ դէպքում նա կըստանայ իր պատիժը, գաղտնիքի կարեւորութեան չափով:

16—Վուսակց, անդամները և համակրողները պարտաւոր են սուրբ համարել ամեն ազգի և կրօնի, մանաւանդ իսլամական հոգևորականներին, և կուսակց. պատկանող մարդկանցից ոչ ոք իրաւունք չունի նրանց պատիւը շօշափելու:

17—Վուսակց, զէնքը կը լինին միայն տրամաբանական և պատմական փաստերն ու ապացոյցները: Ներքին կանոնագրի գծած դէպքերում, գործ կ'ածուի ուրիշ զէնք:

18—Բոլոր այն ծրագիրները, վճիռներն ու հրա-

տարակութիւնները, որոնք չեն կրում վարչութեան կնիքը, համարուում են անվաւեր:

19—Հետեւեալ կարգերի համար նշանակած ամեն մի ներկայացուցիչ պարտաւոր է ունենալ առանձին նշանով առանձին վարկազիր:

20—Վարչութիւնը կազմած է հետեւեալ կերպով: Առաջին՝ հիմնադիր, երկրորդ՝ ներկայացուցիչ, երրորդ՝ խմբապետ, որի խումբը 12 հոգուց չպիտի անցնէ. չորրորդ՝ տասնապետ, որը պիտի կառավարէ 10 հոգի. հինգերորդ՝ խմբակ, որը բաղկացած է 10 հոգուց: Խմբակը ենթարկուում է տասնապետին, տասնապետը՝ խմբապետին, խմբապետը՝ ներկայացուցչին և ներկայացուցիչը՝ կենտրոնին:

21—Ամեն մի խումբ պարտաւոր է ճանաչել միմիայն իր կառավարչին և ոչ նրանից բարձրին: օրինակ խմբապետը իրաւունք չունի ճանաչել կենտրոնին և ոչ էլ տասնապետը ներկայացուցչին: Հակառակ դէպքը տեղի կունենայ այն ժամանակ, երբ բարձր դասը (խումբը) հարկաւոր դէպքում իրեն կը ճանաչեցնէ առանձին նշանաբանով. և բացի նրանք, որոնք նրան ճանաչեցին, ուրիշ մէկը չպիտի ճանաչէ: Օրինակ, առանձին պարագայում հարկ դատուեց, որ ներկայացուցիչը իրեն ծանօթացնէ, ներկայ գտնուողները, որոնց առանձին նշանը տրւած է արդէն, պարտաւոր են պաշտպանել նրան և գաղտնիքը չյայտնել ոչ ոքի, մինչև անգամ իրենց բացակայ ընկերներին:

22—Ամեն մի կարգ տարբեր անուն ունի և դա միայն կենտր. վարչ. համար, կազմակերպութիւնը որոշելու համար է, և ոչ մէկը միւսից ոչ մի առաւելութիւն չունի:

23—Կազմակերպութեան այս կանոնագիրը կարգալուց յետոյ, ով որ կը տեսնի, որ արժանաւորութիւն ունի անդամակցելու, կարող է կանոնագրի բոլոր յօդուածները ընդունելուց յետոյ, առանձին խնդրանքով դիմել և իրեն լաւ ծանօթացնել կենտրոնի ներկայացուցչին, ուր որ լինի և յայտնել իր միտքը: Կենտրոնն ու անդամները նրա արժանաւորութեան մասին տեղեկութիւն առնելուց և քննելուց յետոյ, նրան կ'ուղարկեն մի կնքած տոմսակ և մի պայմանագիր:

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՅՈՎՍԷՓ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(ԽՈՅԵՑԻ)

Վաւճուուն, անհանդարտ բնաւորութեամբ երիտասարդ էր նա:

Ծնւել էր 1880 թւին Պարոկաստան-Ատրպատականի խոյ գաւառի Սէյտաւար գիւղում, դեռ մանուկ հասակում նա մասնակցում էր հողագործական աշխատանքների՝ միաժամանակ գիւղական քահանայի մօտ գրագիտութիւն սովորում: Երբ իր հօր եղբօր ջանքերով—հակառակ հօրը կամքին—տարուում է Երևան այնտեղի թեմական դպրոցում ուսումը շարունակելու: Կրթ. դաստիարակից նա թողնում է դպրոցը և մտնում զինագործի արհեստանոց: Մի օր ատրճանակ նորոգելիս՝ անզգուշութեամբ արձակած զնդակից սպանւում է իր ընկերը: Այդ դժբախտ դէպքը վատ է ազդում նրա վրայ և խղճի խայթից նա հալածական գալիս է Բաթում և մտնում նաւթի գործարան, որպէս բանուոր:

Գաշնակցութեան դրօշակի տակ բանւորական միութիւնները կազմակերպման աշխատանքները մէջ նա կատարում է գնահատելի դեր իր ընկեր բանւորների շրջանում: Ընդհին իր շնորհի ու անկեղծ բնավորութեան նա վայելելով բանւոր ընկերների վստահութիւնն ու յարգանքը, ընտրւում է նախ բանւորական միութիւնների վարչութեան և ապա տեղական կոմիտէի անդամ: Նրա մէջ հետզհետէ բարձրանում է դէպի յեղափոխական ակտիւ գործը նւիրելու տրամադրութիւնը, և նա 1907 թւին մտնում է մարտական խմբի մէջ:

1908 թ. նոյեմբ. 3-ին, կազմակերպութեան հրահանգով, մի ընկերով հետ միասին կատարեալ յաջողութիւնով իրագործեց Սօչի քաղաքի մէջ 100 դիւղացի մասնիչ-լրտես Մետրոք Մինասեանի տեսչութեամբ: Այդ յաջող ակտիւ վերջը, նա կրկին վերագառնալով Բաթում, շարունակում է իր բանւորի անձնական աշխատանքով ապրել, որպէս յեղափոխական ճշմարիտ զինուոր:

Այդ ժամանակներում պարսկաստանը բռնկել էր ազատագրական շարժումով: Յովսէփի Բաթում գտնուող իր հայրենակիցների մէջ եռանդուն կերպով մղում է ագիտացիա, աշխատելով կազմել խմբեր՝ օգնելու Ստրպատականի վտանգուած հայ գիւղերի ինքնապաշտպանութեան գործին:

Երբ Պարսկաստանում Հ. Յ. Գաշնակցութիւնը ակտիւ կերպով սկսեց մասնակցել պարսիկ ազատագրան շարժման, ընկեր Յովսէփի ձգելով անձնական աշխատանքը՝ մի խումբ գաղափարակից-նւիրած ընկերների հետ նետուեց վտանգալի ասպարէզ-կռուի դաշտը:

Ընկերների հետ նա անցաւ Պարսկաստան և Թաւրիզի մօտ՝ Սօփիան գիւղում պարսիկ բռնակալութեան վայրագ հորդանքների հետ բռնած դժբախտ կռուում սպանում է նա անօրինակ շարժարանքներով:

Պարսիկ ազատագրական-յեղափոխական շարժմանը, հայ երիտասարդութիւնը Գաշնակցութեան դրօշակի տակ՝ իր ակտիւ մասնակցութեամբ մի անգամ ևս ապացուցեց, որ հայ արիւնի մէջ հետզհետէ արժարւծում է անկաշտ ազատասիրութեան կրակը՝ դէպի արդարութիւնը, յեղափոխական կարմիր կռուի ճանապարհով գնալու տրամադրութեան հետ:

Այդ ճամբուն վրայ ընկածներից մինն էլ բանւոր Յովսէփն էր:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ա Մ Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի Դ Ա Կ Ա Ն Բ Ա Ն Ա Կ

(Շար. № 9-ի Էւ վերջ)

IV

Հայրենիքը—մի հոյակապ մարզարան:

Գիւղական ու քաղաքային դպրոցները արդէն մի-մի այդպիսի մարզարաններ են, ուր աւանդում են զինւորական մարմնամարզութեան առաջին կանոնները, և երբ դեռ գրեթէ պատանի՝ շվէյցարացի նորակոչը ստանում է իր ղինւորական գրքոյից՝, նա անհամեմատ աւելի է պատրաստուած իրագործելու ռազմային կարգապահութեան պահանջները, քան իր հասակակից նորակոչները միւս երկրներում:

Որքան բազմաթիւ են մարմնամարզական կամաւոր վնկերակցութիւնները Շվէյցարիայի բոլոր կանտոններում: Նրանք յաճախ վայելում են գաշնակցական կառավարութեան հովանաւորութիւնը, դրամական նպաստը: Զինւորական կանոնագրի 104-րդ յօդուածն ասում է՝

„Գաշնակցութիւնը (La Confédération) նպաստաւորում է ընկերակցութիւնները և առհասարակ այն բոլոր ջանքերը, որոնց նպատակն է հոգալ պատանիների նախապատրաստական զինւորական կրթու-

թիւնը՝ զին. ծառայութեան պահանջած հասակից առաջ: Գաշնակցութիւնը հսկում է, որպէսզի հրաւիրութեան ուսուցումը առաջին տեղը բռնէ և նա ձրիապէս մատակարարում է զէնքեր, ռազմամթերք ու հանդերձանք“:

Հուշակաւոր են այսպէս կոչւած գաշնակցական հրաձգութեան գումարումները (tirs fédéraux), որ տեղի են ունենում երկու տարին մի անգամ և առատօրէն նպաստում են կառավարութիւնից:

Անթիւ են և հրացանաձիգ ընկերութիւնները (sociétés de tir), ամեն մի կանտոնի, ամեն մի համայնքի մէջ: Նրանք ևս ամեն կերպ խրախուսւում են կենտրոնական ու տեղական կառավարութիւնից: Վիրակի ու տօն օրերը դուր կը տեսնէք ամեն տեղ, շվէյցարական բոլոր քաղաքներում այդ բազմաթիւ հրացանաձիգ խմբերը, որ կատարում են մի տեսակ նւիրական հանդիսաւորութեամբ իրենց մարզանքը, մի զւարթ ու արգասաւոր մրցութեան մէջ: Այդպիսով հրաձգութիւնը դառնում է ամենուրեք ազգային նւիրական սովորութիւն. նա մշակում ու պատրաստում է այն առաջնակարգ, աննման հրացանաձիգներին, որոնց հաշակը տարածւած է ամբողջ աշխարհում:

*

Զինւորը բնաւ չի կորցնում քաղաքացու սովորութիւնները: Զինւորական դպրոցից, պարբերական ու կարճատե կրկնութիւններից վերագառնալով, նա դարձեալ ամբողջապէս տրւում է իր քաղաքացիական պարտաւորութիւններին, պահելով միշտ իր մօտ, որպէս նւիրական սեփականութիւն, իր հրացանն ու այլ պարագաները: Այդ վերջին հանգամանքի շնորհիւ, զօրաշարժը, մօբիլիզացիան Շվէյցարիայում կարող է կատարել անհամեմատ աւելի արագ, աւելի արագ և աւելի դիւրութեամբ, քան որեւէ այլ եւրոպական պետութեան մէջ: Ահազանգն ու զօրաշարժի հրաւերը լսելուն պէս՝ շվէյցարացին անմիջապէս հագնում է համազգեստը, առնում հրացանն ու պայուսակը և ուղևորւում նշանակած ժամադրափայրը... Երեք-չորս շաբթւայ ընթացքում փոքրիկ երկիրը իր ընդամենը 3 միլիոն ազգաբնակչութեամբ կարող է ոտքի վրայ դնել չորս հարիւր-հազարաւոր պատկառելի մի բանակ:

Ոչ մի անհրաժեշտութիւն երկարատե ու տանջալի մարզանքների մէջ: Ոչ մի կարիք՝ անջատելու զինւորաքաղաքացուն իր օձախից ու պարապմունքներից, ահագին ժամանակամիջոցով: Ո՞վ է ասում, թէ այդպիսի զօրքը անընդունակ է աջող պատերազմներ վարելու: Ո՞վ կարող է հաստատել, թէ յաղթութեան ամենաէական պայմանն է ստեղծել անպատճառ միլիտարական տիպար-զինւորին, կռել նրանց զօրանոցներում մեքենաների, աւտոմատների պէս, անդուլ, սպանիչ և յարատե մարզանքներով... Պատմութիւնը տալիս է մեզ սքանչելի օրինակներ, երբ քաղաքացիական, ժողովրդական բանակները, թէկուզ նւազ զրահաւորուած ու մարզուած, բայց և իրենց պարտքի գիտակցութեամբ սողորուած, յաղթել են յաճախ միլիտարական կազմակերպուած ու կարգապահ բանակներին: Յիշենք Ֆրանսիայի ժողովրդական վաշտերը Մեծ Յեղափոխութեան միջոցին, որ մի քանի անգամ յաղթական գրոհ տւին և ի վերջոյ յետ մղե-

*) Տես „Իրօսակ“, 1808 թ., № 11—12:

ցին ամբողջ բանապետական Եւրոպայի զորքերը Յիշենք Ամբրիկայի անկախութեան համար պատերազմող բանակը, որ նոյնպէս տարածւոյն 18-րդ դարի վերջերում, փայլուն, պատմական յաղթանակներ Յիշենք Ռուսաստանի 1812-է, բռնապարտի արշաւի միջոցին. ապա Գարիբալդիի բանակները նրանց դերը Իտալիայի ազատագրական կռիւներում... Յիշենք վերջապէս, հերոսական ազգային պաշտպանութիւնը (la defense nationale) Փրանսիայում, 1871 սարսափելի թուականին, Գամբետտայի հոգեւոր հրամանատարութեան տակ... Ահա թէ ինչ է գրում այդ պատմական դրուագի մասին գերմանացի հռչակաւոր գեներալ ֆոն Գեր Գօլցը.

„Իր կամքի ճիգերով (և շնորհիւ Ֆրէյսինէի պէս աշխատակիցներին) Գամբետտան բոյաւառեց մի անգէն ու հոգեվարք երկիր և մղեց նրան դէպի այնպիսի դիմադրութիւն, որ ամբողջ ամենեւեմ ընկալեց իր կանգնեցրեց գերմանական զօրքերը: Մենք ճանաչեցինք այդպիսով գոյութիւնը աշխարհի ուժերի, որոնց աշխարհի առանց այդ փորձի, չէինք դնա հատի իրենց արժէքով... Բաւական եղան նրան մի քանի շաբաթ՝ դուրս բերելու բաօսից կազմ ու պատրաստ մի բանակ *):“

Ոչ անհրաժեշտ չէ պրօֆէսիօնալ զինուորամբանաների սխտեմը: Հայրենիքի պաշտպանութեան համար բաւական է և գերազանց է համաժողովրդական զինուորութեան այն հաստատութիւնը, որ մենք այստեղ նկարագրեցինք:

Շվէյցարիան առաջինն է իրագործել ամենաբանաւոր և ամենաաժան, ամենատնտեսական և ամենարդար զորասխտեմը, որ համեմատաբար շատ քիչ է ծանրանում աշխատաւոր ազգաբնակչութեան պարանոցի վրայ և առողջ միանգամայն ի վիճակի է, հզօր ու կորովի դիմագրաւուժով պաշտպանելու վտանգելիք հայրենիքը: Նու չի յարմարեցւած յարձակողական նպատակների, ու յաճողական արշաւանքների համար—իրաւ է Բայց արդ յատկութիւնը նրա ուժն է և ոչ թուլութիւնը. և նախանձելի առաքինութիւնն է և ոչ արատը: Նա է պէս դեմօկրատական է, ժողովրդական: Այդ իսկ պատճառով նա չի կարող գործիք դառնալ այս կամ այն ընչաքաղց, արկածախնդիր անհատի, դասակարգի, կամայականի ձեռքում՝ նիւթելու համար ժողովրդաւնջ պատերազմներ դրսում կամ յօրինելու հակաժողովրդական, բռնաւորական վերիվարուժներ՝ ներսում, կամ թէկուզ ճնշելու, հարստահարելու աշխատաւոր խաւերը... Աշխարհը գնում է աստիճանաբար դէպի խաղաղութիւն, ոչ դէպի պատերազմ. դէպի շինարար քաղաքակրթութիւն, ոչ դէպի զազիր ու վայրենի իրարանսանութիւն: Սօցիալիզմի, աշխատաւոր դասակարգերի յարաճուն ու սպանագին գրոհի առջև, ամենագիշատիչ, ամենառազմասէր ուժերն անգամ հարկադրած են կամաց կամաց մեղմելու իրենց վագրային ախորժակները, համակերպելու տիեզերական խղճմանքի հրամայական ղօղանջին, լուծելու միջպետական վէճերն ու ընդհարումները խաղաղ, անարիւն ճանապարհով, միջազգային իրաւախօսութիւններով, իրաւարար աստեաններով և կը գայ ժամանակ—նա հեռու չէ—երբ այդ հսկայ, զրահաւորած, արքայապաշտպան ու փողպաշտպան լէգէօնները միանգամ ընդմիջու կը կորցնեն իրենց

*) Gaston Moch, L'Armée d'une Démocratie

գոյութեան իրաւունքը և կը փոխարինուին համաժողովրդական ու հայրենապաշտպան միլիաներով: Ուշագրաւ է, որ անգամ իրենք պաշտօնական ձեռնահաս ներկայացուցիչները կապիտալիստական Եւրոպայի, գեներալներ, սպաներ, հրապարակասաններ, չեն թագնուում իրենց հիացմունքը շվէյցարական զօրքի հանդէպ: Իւրաքանչիւր տարի, զօրաշարժի ու զօրախաղի, մանեօվների միջոցին գալիս են այլևայլ երկրներից պաշտօնական պատերազմներ դիտելու, ուսումնասիրելու փոքրիկ Հելվեցիայի ձեռք բերած գեղեցիկ նւաճումները զինուորական արւեստի մէջ և ամենքը միաբերան գրւատում են, փառաբանում *):“

*) Ահա թէ ինչպէս էր խօսում շվէյցարական զօրքի մասին պորթուգէս „Temps“ լրագիրը 1890 թւին հրատարակած իր թղթակցի մի ուշագրաւ յօդուածի մէջ:

Շվէյցարական զօրքը մի հազարապիտ առաւելութիւն ունի, որ յարուցանում է միտժամանակ թէ Փրանսիայի և թէ գերմանացի զինուորական ընդադատների խանդավառութիւնը: Թէ առաջինները և թէ վերջինները ծանրակշիռ հիմքեր ունին՝ գնահատելու և զարմանալի չէ, որ նրանք գալիս են նման եղրակացութիւնների:

Շվէյցարական Գաշնակցութիւնը ցոյց է տալիս ապշեցուցիչ օրինակով, թէ ինչ կարելի է անել առանձնաշատուկ պայմաններում, ունենալով ամենահամեստ միջոցներ: Այդ համեմատաբար աղքատ և թոյլ բնակչութիւն ունեցող երկիրը կարող է ուզած օրը ստքի հանել 200,000 զինուոր և ծանապարհօրդը հազիւ կը կարողանայ նշմարել այդ զօրքի ամենափոքրիկ հետքերն անգամ: Ասում ենք „զօրք“, թէ և իրօք նա միլիցիա՝ անունն է կրում, որովհետև նրա անդամները երբէք չեն անցուցել կանոնաւոր զօրքերի մտական ու յարատու ծառայութիւնը: Եւ այնուամենայնիւ, այդ մարդիկ իսկական զինուորներ են, քանի որ նրանց կենսընդամանակ հասակից դուրս, չի եղել և ոչ մի վայրկեան, երբ նրանք չը գտնուէին զինուորական դիսցիպլինի աղբեցութեան տակ:

Չունենալով մշտական բանակ, շվէյցարացիք ունին, սակայն, հաստատութիւններ, որոնք կազմում են այդպիսի բանակի առօրեայ կենսի անհրաժեշտ մասը: Շնորհիւ պարզ և միանգամայն սրամիտ կազմակերպութեան, նրանք քաղում են այդ հաստատութիւններից բովանդակ օգուտը այնպէս որ առաջին ազդանշանը հնչելուն պէս՝ իսկական զօրքը դուրս է գալիս ասն գետնի տակից, պատրաստ կուեցու նոյնքան արիւնթեամբ, ինչպէս կուեւ են իրենց նախնիքները: Արդեօք դա մի կատարելապէս համոզեցուցիչ ապացոյց չէ, թէ ինչ կարող են կատարել խնայողութիւնը, լաւ կազմակերպութիւնը և սխտեմատիկ ձգտումը՝ քաղել վճռականութեամբ օժտւած մի ուժից այն բոլոր արդիւնքը, որ նա կարող է տալ:

Այդ գերազանց սխտեմը հիմնւած է միլիցիական պարտադիր ծառայութեան վրայ: Բայց այստեղ այդ ծառայութիւնը, այնքան ծանր ուրիշ երկրներում, դառնում է մի տեսակ հաճոյք, և երիտասարդ, առողջ շվէյցարացին կը համարէր իրեն խորապէս ստորացած, ոչնչացած, եթէ նրան դասէին զինուորական ծառայութեան համար անպէտքների շարքը...

Չը պէտք է մոռանալ, որ այդ սխտեմի մէջ մեր օրերում կարևոր դեր է խաղում մարդկանց բարի կամեցողութիւնը: Շվէյցարական երիտասարդութիւնը պատիւ է համարում իր բարոյական պարտքը լիովին հատուցանելու հայրենիքին, նա միշտ պատրաստ է արձագանք տալ կենսաբանական իշխանութեան առաջին կոչին... Այդ միլիցիայի ուժը կազմում է մարդկանց փոխադարձ հուսալի ու վստահութիւնը, ոչ թէ մարդկայական հնացած դուրսն ուղին դիսցիպլինի մէջ, այլ պարտքի կենդանի զգացումը: Այդպիսի պայմաններով միայն շվէյցարական զինուորական ղեկավարները կարող էին վստահել ու պահ տալ ամեն մի առանձին զինուորի գէնը, ուղղ-

Եւ որպիսի ոգի, հայրենասիրական շունչ, ներդաշնակութիւն այդ ինքնատիպ զօրաշարքերում... Այդ կողմից ևս Հելվեցիայի օրինակը եղակի է: Ներդաշնակութիւնը այդտեղ դրսից չի բռնադրւած, այլ միանգամայն բնական է, ինքնայորդոր, արդիւնք բարոյական, քաղաքացիական մի գերազանց դաստիարակութեան: Ամենքը, պարզ զինւորից մինչև ամենաբարձր աստիճանորը, տոգորւած են թանկագին հայրենիքի պաշտպանութեան իդէալով և բոլորն էլ դիտում են իրար, որպէս եղբայրներ, պատրաստ մեռնելու ընդհանուր օճախի համար: *Un pour tous, tous pour un*— մէկը բոլորի, բոլորը մէկի համար: Դասալիքները, կարգապահութեան դէմ մեղանշողները արժանաւոր պատիժ են ստանում և ենթարկւում ամբողջ երկրի ծաղր ու ծանակին...

Թարձրի ու ցածի խտրութիւնները գրեթէ չքանում են օֆիցէրների ու զինւորների փոխադարձ պարզ, մարդավայել յարաբերութիւնների մէջ: Դասակարգերի համարեա ոչ մի խտրութիւն, աստիճանները տրւում են համաձայն մարդկանց անձնական արժանիքներին: Ժողովուրդը և նրա ոգին ներկայ են բոլոր աստիճանների վրայ. ուսուցիչական է զինւորական ամբողջ սանդուխը: Հեծելազօրքի շարքերում դուք կը հանդիպէք կողք կողքի նրբակազմ ու փափկասուն արիստոկրատին, աշխատաւոր ու անտաշ գիւղացուն, կանապանին, սափրիչին և այլն: Այդ ներդաշնակութիւնը ազգային հոյակապ բանակի մէջ ևս առաւել գրաւիչ է, երբ մտաբերում էք, որ «ազգը» այդտեղ, այդ երկնամբարձ լեռների մէջ, կազմւած է երեք տարբեր ազգութիւններից—գերմանացի, ֆրանսիացի, իտալացի— և չորս թէ հինգ կրօններից... Ինչպէ՞ս է լինում այդ: Հվէյցարիայի քաղաքական - հասարակական սիստեմի գաղտնիքն է դա, որ պարտաւոր են ընդօրինակել, իրենց յամբընթաց էւօլիւցիայի մէջ, բոլոր այլացեղ ու այլ-բառբառ պետութիւնները և ամենից առաջ՝ Ռուսաստանն ու Թիւրքիան:

«Միլիտարիզմը» չը կայ Հվէյցարիայում կամ հասցրւած է իր նւագագոյն աստիճանին: Մշտական զօրք չէք տեսնի, զինւորական շտաբն էլ (սպայակոյտ) կայ բայց պարադի, ցոյցի համար չէ, այլ անհրաժեշտ ծառայութեան, գործավարութեան: Ոչ մի շուք ու փայլ ոչ պերճանք ու շոտայութիւն... Ծայրայեղ պարզութիւն ամենուրեք—ինչպէս վայել է մի ուսուցիչութեան:

Եւ այդ օրինակելի անտեսութիւնը զինւորական ծախքերի մէջ, խնայողական այդ վերաբերմունքը դէպի ժողովրդի հարստութիւնը՝ հնարաւորութիւն է տալիս

մամթերք ու հանդերձանք: Աերջին պարագան հիմքն է Հվէյցարական մօբիլիզացիայի, զօրաշարժի, որ կարող է իսկապէս հրաշք համարել իր արագութեամբ: Բաւական է տրւած հրամանը, բաւական են հեռագիրները, որպէսզի մի քանի օրւայ մէջ ամբողջ բանակը շարժար կանգնի գրոշակների տակ...

Տանաւմեայ մանուկը, որ ձգտում է ստանալ դպրոցում մրցանակ հրաձգութեան մէջ և 60-ամեայ վետերանը՝ նոյն նշանաբանն են կրում իրենց կրծքի տակ. «հայրենիքի չեղքութիւն և անկախութիւն»: Ահա թէ ինչն է ստեղծում այդ միլիտարիզմը—ոչ թէ, ի հարկէ, գերազանց «զօրք» բայց, անկասկած, լաւագոյն ինքնապաշտպանութիւնը, որ երբեքից գոյութիւն է ունեցել. այդ ուժը շահագրգռող վտանգաւոր կարող է լինել իւրաքանչիւրի համար, որ կը մտածէ յարձակւում գործել նրա վրայ:

լայնօրէն հոգալու ուրիշ անհրաժեշտ, կրթական ու քաղաքակրթական պէտքերը: Ինչպէս որ Հվէյցարիան բոլոր երկրների համեմատութեամբ ամենաքիչ ծախսողն է բանակի վրայ (ընդամենը 4 ֆրանկ մարդագլուխ *), այնպէս և նա հանդիսանում է ամենաշատ ծախսողը կուլտուրական պէտքերի վրայ: Որքան ուրիշ երկրների մէջ ճամբորդի աչքին են զարնւում ամեն քայլափոխում կազարմաները, զօրանոցային ազմկալի մարզանքները, զինւորական ցուցամուշ շուքն ու ժխորը, նոյնքան Հվէյցարիայի մէջ ձեր ուշք ու միտքն են գրաւում, բեռում, հմայում... անհամար ու հոյաշէն դպրոցները, «ուսուցիչութեան այդ գերագոյն տաճարները» (*les temples de la démocratie*) ինչպէս յաճախ անւանում են նրանց:

Այդպէս է «միլիցիայի», համաժողովրդական բանակի հայրենիքը: Դպրոց քաղաքակրթութեան և դպրոց իսկական, անաղարտ հայրենասիրութեան: Ամբողջ կեանքը մարզւում են: Մարզանք հոգեկան, կուլտուրական, բայց նախ և առաջ՝ մարզանք ֆիզիկական: Այդպէս է պահանջում հայրենիքի շահը, որ բոլոր շահերից գերագոյնն է... Թէ պահպանողական-հանրապետականի, թէ պրօգրէսիստ-արմատականի և թէ տիեզերական հաւասարութեան ձգտող սօցիալիստի համար:

Ֆիզիկական մի հոյակապ մարզարան... Այդ երկիրը պէտք է օրինակ լինի միւսներին: Մենք շեշտեցինք նախորդ էջերում, որ անգէն ժողովուրդը, նա որ գարշւում է վառօդի հոտից և զինական մարզանքներից, մի սոսկ փախաւ է ներկայ աշխարհում, մատնւած ի սաստ ճակատագրի: Բայց զինւորութիւնը գեռ բոլորը չէ: Զէնքը անհրաժեշտ է, բայց բաւական չէ: Մի ժողովուրդ պէտք է մարզել, դաստիարակել առնական առաքելն ու թիւնն երի մէջ—առհասարակ: Նրա ֆիզիկական դաստիարակութիւնը պէտք է ընդունել, իբրև առաջնակարգ մի պահանջ, իբրև գերագոյն պոստուլատ: Ատիտ, թուրակազմ և հիւանդոտ ժողովուրդները հաշիւ չեն տիեզերական արհօպագում... Ժողովուրդը պէտք է առողջ լինի—ֆիզիկապէս առողջ՝ նախ և առաջ, որպէսզի կարենայ աջողութեամբ առաջ մղել իր մտաւոր-կուլտուրական առաքելութիւնը:

Իսկ այդ անհրաժեշտ յատկութիւնները—առողջութիւն, առնականութիւն—կարելի է մշակել: դարձեալ միայն միլիտարի, համաժողովրդական բանակի մթնոլորտում, ուր մարմնամարզական արեւստը, իր բոլոր նրբութիւններով, վաղուց—արդէն մանուկ հասակից—ձանաչւում է, իբրև էական ու նւիրական պարագամունք:

Այդ առողջ ու փրկարար մեթոթները պէտք է այժմից կամաց-կամաց ձանապարհ բաց անեն նաև մեզ մօտ, օսմանեան, ուսու պարսկական իրականութեան մէջ: Նրանք սկսել են արդէն արծարծել Ռուսիայում պէտք է ձգտել ստեղծելու ամենուրեք քաղաքացիների առնական, կենսաթարմ ու կենսունակ սերունդներ, որ

*) Միլիցիա Իսպիանիայում է: արեւելքում ու մարդակուլիս-8 Բրանկ. Ռուսաստանը—10 Բր. 25 ս., Իերմանիան—12. 45, Անգլիան—19. 25, Ֆրանսիան—20 Բր. 80 ս.:

կարողանան ոչ միայն պիտանի գործիք լինել հայրենիքի պաշտպանութեան, այլ և տանել իրենց ուսերի վրայ քաղաքակրթական, հոգեկան վերածնութեան դժուարին գործը: Պէտք է սկսել պրոպագանդը յանուն մեծ քաղաքացիական բանակի, միլիցիայի:

Իդէալը, կրկնում ենք, դեռ հեռու է, բայց նա ուսուցիա չէ, ցնորք չէ: Ամեն մի մեծ նւաճում դիտւել է ժամանակին որպէս ցնորք — անխարխիւ ու անիրագործելի էթէ սրանից 1¹/₂ տարի առաջ մէկն ազդարարէր, թէ շուտով վաղը պիտի կատարւի — մի բուն կտրիճների նախաձեռնութեամբ — օսմանեան երկրի վազուց բաղձացած ու տնքաւ ճիգերով պատրաստած յեղափոխութիւնը — ամեն ոք կը խնդար այդ մարդարէութեան վրայ, համարելով այն ցնորք, ուսուցիա:

Բայց իդէալներն իրագործուում են էտապներով, հանգրուաններով: Միլիցիայի վեհ սկզբունքն ևս մէկէն ի մէկ իրագործելու բան չէ, այլ միայն աստիճան առ աստիճան: Միլիտարիզմի ահռելի Մոզորը, որ դարերով ձգել, տարածել ու աճեցրել է իր արմատները ազգաբնակչութիւնների հոգեբանութեան մէջ, տարաբախտաբար շուտ ու դիւրութեամբ չի կատարի իր նահանջը: Հարկւոր են ըէֆօրմներ, լուրջ ու խորունկ բարենորոգումներ այն ուղղութեամբ, որ բնորոշեցինք: Զինուորական աստիճանների ու յարաբերութիւնների անհրաժեշտ ռամկավարացման հետ պէտք է կրճատել հեռզհետէ զինուորական ծառայութիւնը, ինչպէս այդ արևում է աստիճանաբար քաղաքակրթւած երկրներում, ռամկավարութեան ճնշման տակ: Ֆրանսիայում երկամեայ ծառայութիւնը մտցելուց յետոյ, այժմ մղւում է պրոպագանդ յօգուտ մէկամեայ ծառայութեան: Աւելի ևս ուժեղ է մտքերի խմորումը ի նպաստ համաժողովրդական բանակի կամ միլիտի և տարակոյս չը կայ, որ ոչ հեռու ապագայում, շնորհիւ ռամկավարական գաղափարների և ժողովրդապետութեան սրարշաւ առաջադիմութեան, մենք կը տեսնենք Ֆրանսիայում շվեյցարական այդ սիստեմն իրագործւած: Ֆրանսիային կը հետևին անխուսափելիօրէն միւս երկրները, որոնք բոլորն էլ, ինչպէս ցոյց տւինք մեր տեսութեան սկզբում, ապրում են ակամայօրէն միլիտարիզմի խեղդիչ կոշմարի տակ: Եզրափակենք մեր դատողութիւնները Ֆրանսիական մի նշանաւոր սպայի, գնդապետ Պատրիի մարգարէութեամբ.

«Երկամեայ զինուորական ծառայութիւնը, ասում է նա, կը տւէ, որքան կարող է, բայց մենք վաղ թէ ուշ անհրաժեշտաբար պիտի յանգինք Ֆրանսիայում, ինչպէս և բոլոր եւրոպական ազգութիւնների մէջ, միլիտի կազմակերպութեան» (nous arriverons forcément à l'organisation des milices)*.

Եթէ մեր երկիրը յաւակնութիւն ունի մտնելու նոյն «եւրոպական ազգութիւնների» աւազանը, ապա նա ևս, հարկադրաբար, պիտի ընթանայ նոյն էւրօլիցիայի ճանապարհով, նոյն մեթօդներով: Կրկնում ենք, բոլոր երկրներին — ո՛րք առաւել թիւրքիայի ու Ռուսաստանի համար — վաղուց պէտք է գոցւած համարել յարձակողական, նւաճողական արշաւանք-

ների շրջանը. ժողովուրդների և ամբողջ մարդկութեան ու քաղաքակրթութեան շահն է այդպէս պահանջում — և նրանք տեղ-տեղ պատրաստ են արդէն, ուրիշ տեղեր պատրաստուում են բռնադրելու և յարգել տալու իրենց չափազանց իրաւացի տնէշանքները... Ժողովուրդները — իրենց նիւթական, մտաւոր ու հոգեկան զարգացման համար — բաղձում են ամենուրեք խաղաղութեան, մեր տարաբախտ, արիւնաքամ ժողովուրդները — առաւել ևս: Բայց մեղի, թուլամորթ խաղաղութիւնը չէ, որ պիտի քաջալերենք ու քարոզենք, այլ այն խաղաղութիւնը, որ օժտւած է հանուր, երկաթէ զինաւորութեան անխոցելի պարիսպներով, որ գիտէ յարգել տալ ինքզինքը աշխարհի բռնատնէշ ակորթակների կրկէսներում... Պէտք է յար և միշտ արժարծել միլիցիայի, համաժողովրդական բանակի, համաժողովրդական մարզումի գաղափարը, որ հարւածելով միլիտարիզմի շարիքներին, նւազեցնելով զինաւորութեան ծախքերը, բարձրացնելով երկրի անտեսութեան ու հարստութեան մակերևոյթը, ռամկավարացնելով աստիճանաբար զինուորական բանակը, պիտի նպաստէ հզօրապէս թարմ, առողջ սերունդների առաջացման, պիտի կապէ միաժամանակ — սերտ, համերաշխ կապերով, ինչպէս Ալպեան չքնաղ հայրենիքում — մեր երկրների այլացեղ ու այլալեզու ազգութիւններին, յանուն ընդհանուր հայրենիքի պաշտպանութեան ու բարգաւաճման:

Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

V

ՅԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊՐՕՑԵՍՈՒՄ

Յիշեցինք արդէն անցեալ յօդւածի մէջ այդ հզօր ու առաջնակարգ գործօնի մասին, որ անւանում են ժառանգականութիւն: Շեշտեցինք, որ ընդհանուր ծառայումը, արիւնակցութիւնը միւսնոյն համայնքի անդամների միջև և նման յատկութիւնների ժառանգականօրէն փոխանցումը սերնդէ-սերունդ, դարէ-դար կազմում է ազգային մարմնի ամենաէական ստորագրելիքներէից մին:

Ինչպէ՞ս սակայն բացատրել ժառանգականութեան այդ երևոյթը: Ինչպէ՞ս է լինում, որ մի ազգի բաժան-բաժան, ցիր ու ցան բեկորները, նետուած տարածութեան այլևայլ ծայրեր, ապրած դարերով տարբեր վայրերում, ցեղազրական ու կուլտուրական տարբեր հօրիցօնների մէջ, պահպանում են այնուամենայնիւ նման, ընդհանուր, ֆիզիկական, նաև հոգեկան դժեր... Ինչպէ՞ս է լինում, որ ժամանակակից հրէան, Րիբոյի ասելով, էպպէս նոյն ֆիզիկական, մարդաբանական տիպն ունի, ինչ որ ունեցել են նրա հեռաւոր նախնիքները, տասնեակ դարեր որանից առաջ: Ինչպէ՞ս է, որ Գոլթանի գօլը, Սպահանի ու Սալմաստի հայ բնակիչը, Չէյթուսի լեռնականը, Լեմբերգի ու Չերնօլիցիի հայախհը (Armeno-Pole), այնքա՛ն տարբեր լինելով հանդերձ իրենց ուրոյն առանձնայատկութիւններով, այնքա՛ն բաժնւած տարածութեան, պատմութեան, ճակատագրի անջրպետներով — այնուամենայնիւ այնքան ցայտուն նմանութիւն են կրում: Իրենց մէջ և առաջին իսկ հայեացքից մատնում են իրենց բնորոշ հայկական կերպարանքը, որով խտիւր գատնում են նրանք բոլորն էլ իրենց շրջապատող ուրիշ ազգային համայնքներից: Մեր խօսքն, ի հարկէ, ընդհանուր էր և ոյ թի մասին է և ոչ ֆիզիկապէս ապագայնացած (denationalisé) անհատական տիպարների մասին, որոնք

*) Gaston Moch; L'Armée d'une Démocratie:

իբրև բացառութիւն, կան իւրաքանչիւր ազգութեան մէջ:
Ահա մէկն ևս «տիեզերական առեղծւածներէն»: Ի՞նչ է ազգային ժառանգականութեան էութիւնը. ինչպէ՞ս բացատրել այդ զարմանալի նմանութիւնը ժամանակի և տարածութեան բեւեռներում:

Այս, Ֆիզիկական, անորոշօրգիական դժերի հետ շարկապում են անհրաժեշտօրէն և հոգեբանական մի շարք դժեր, որոնք կազմում են իւրաքանչիւր ազգի հաւաքական բնաւորութիւնը, նրա «ազգային ոգին», տեմպերամենտը, խառնածքը: Ազգային անկանխելի զգացումներն են (Ֆիզիկական նմանութիւն) կապած է ազգային անկանխելի տոհմալիզմը (հոգեկան նմանութիւն):

Թւում է թէ, այդ հաւաքական, ազգային բնական տոհմալիզմն է, չը նայեա՞ծ այն խոշոր փոփոխութիւններին, որ կրում է ժամանակի, պատմութեան յեղեղումներին մէջ, պահպանում է յարատևութիւն—ինչպէս Ֆիզիկական առանձնատիպը—մնում է նոյնը իր էական յատկանիշներով, այլևայլ դարաշրջաններում:

*) Ժողովրդի խոշոր, էական յատկանիշները, ըստ Բիբլիոգրֆի զձեռնած են արդէն նրա գոյութեան արշալոյսին. այդպէս օրինակ հռոմայեցիների մէջ կայսերական շրջանում և գաղղացիների մէջ նախ քան Աեսարը:

Տանիններորդ դարի Փրանսիային—շարունակում է պարիզեան գիտնականը—էպպէս նոյնն է, ինչ որ Աեսարի ժամանակների գաղղացին: Նոյն էական յատկութիւնները. զէնքի սեր, մաքի ծայրայեղ թեթևութիւն (այս բառը չը պէտք է հասկանալ միմիայն բացասական իմաստով), անբուժելի ունայնամտութիւն, նրբութիւն, խօսելու անսովոր դիրքութիւն... Այդպէս է եղել հին գաղղացին, ըստ Ստրաբոնի և այլոց վկայութեան, և նոյն դժերը շարունակում են այժմեան Փրանսիացու մէջ, որի երակներում՝ գերակշռել է գաղղական արիւնը և հնուց ժառանգել սերնդէ սերունդ: Նոյն գաղղացիների մասին Յուլ. Աեսար հետեւեալ խորհրդագծութիւններն է արել.

«Նրանք սեր ունին դէպի յեղափոխութիւնները և սուտ լուրերի ազդեցութեան տակ յափշտակում ու դիմում են այնպիսի գործողութիւնների, որ յետոյ ախտաւում են... Որևէ ձախորդութիւն ընկճեցնում է նրանց: Պատրաստ յանկարծակի և առանց պատճառի ձեռնարկելու պատերազմների՝ նրանք աղէտի միջոցին վհատում են, լքում, մեղկանում...»

Հրեութիւնը գուցէ ամենից աւելի է պահպանել յեղի արեան «մաքրութիւնը», թէև նա ևս գերծ չէ մնացել տարգուգութիւններից.**) (croisement), բայց էական դժերը մնացել են մինչև այսօր: Բիբլիոգրֆի հետ նոտա և վիտտոնի գիտնականները ևս եզրակացնում են, որ բոլոր հրեաները նոյնաման դժեր ունին: Անգամ սև հրեաները, որ անյիշատակ ժամանակներից ի վեր հաստատուել են Հնդկաստանում և կլիմայի, միջավայրի ու թերևս տարգուգութիւնների շնորհիւ մասամբ արդէն իւրացրել են հնդկիկների կազմածքը, —անգամ նրանք մասնում են նմանութիւններ Եւրոպայի հրեաների հետ **):

*) Th. Ribot, L'Hérédité.

**) Ինչպէս մի անգամ արդէն յիշեցինք, գուցէ, անադարս ցեղ գոյութիւն չունի: Արեան կուսութիւնը խախտել է—սարացող ամուսնութիւններով—բոյր ազգերի մէջ: Եւ դա դիտում է իբրև ընդհանուր օրէնք (լինում են ևս բացառութիւններ) բարեբախտ մի հանգամանք, առանց որի չէր կատարի ազգերի առաջադիմութիւնը: Չիմաստանի Բարսիլոնը մասամբ բացառում են ցրանով, որ այդ երկիրը դարերի ընթացում գոգ է եղել ուրիշ արիւնների ներմուծում դէմ և համեմատաբար էիլ է ենթարկւել սարգուգութեան: Արաբները ևս այն մասնակ վիայն սկսեցին զարգանալ ու առաջադիմել, երբ հաստեցին հետզհետէ իրենց փարթամ Բաղադարձութիւնը: Ասիայում, Ափրիկայում, Սպանիայում, երբ Մանսեղի օրով ժաւարեցին դէպի այլ ևս այլ հորիզոններ և մասամբ խառնեցին ուրիշ ցեղերի հետ:

**) Իբրև հրեական խոշոր անանձայնակոյութիւն—յիւսակում են այդ ցեղի անսովոր երկարակեցութիւնը: Վիակագրական տեղեկութիւնները, ըստ Բիբլիոգրֆի, ցոյց են տալիս, որ որոշ հման պայմաններում—

Ուշագրաւ է մանաւանդ բոջաների կամ գնչուների փոքրիկ ցեղը: Նա ևս մի փայլուն օրինակ է յեղական ժառանգականութեան: Գարերից ի վեր նոյն խորամտաւ թափառական ու արկածախնդիր բնագրը—բոլոր գնչու սերունդների մէջ: Գարերից ի վեր—նոյն գարշանքը դէպի քաղաքակրթութիւնը... Այդպէս են գնչուները ամենուրեք, և ամենուրեք նոյնն է նրանց Ֆիզիկական տիպը—Թիւրքիստանում թէ Ռուսարիայում, Ռուսարիայում թէ Տրանսիլվանիայում, Սպանիայում թէ Անգլիայում:

Արդեօք այդ բնագրական դարշանքը դէպի արևմտեան կուլտուրան սոսկ գնչուական մի բացառիկ յատկանիշ է, թէ՞ գուցէ նա յատուկ է, իբրև մի ակտիւ ու յարատև ճակատագրականութիւն, ասիական մի քանի այլ համայնքներին... որոնց բարբարոս յետամնացութիւնը մինչև օրս սովորաբար բացատրել ենք քաղաքական ընթիմի այլանդակութեամբ և կուլտուրական շփումներից հետո գտնելու հանգամանքով: Արդեօք քաղաքակրթութիւնը պիտի աշոյղէ՞ ձուլել, մարտել մեր դժբախտ հօրիգօծներում ապրող բոլոր մանր ու խոշոր համայնքները... Յուսով ենք—այս գնչուների օրինակը պէտք է համարել մի բացառիկ կուլտուրական տարկանութիւն և նրանց կիսավայրենի գոյութիւնը քաղաքակրթած երկրների մէջ—մի կատարեալ անտիրօնիզմ, ժամանակավիշտ:

Այդ գոյութիւնը յեշտակեցինք միայն նրա համար, որ յոյց տանք, թէ ինչքան կարող դործն է ժառանգականութիւնը հաւաքական մարմինների մէջ և թէ ինչպէս ազգային, յեղական ուրոյն բնաւորութիւնները յարատևում են դարերի հոսանքում:

Ուրեմն, երբ ասում են «ազգային ոգի», երբ այս կամ այն ժողովրդի վերաբերմամբ հաստատում են «ուրոյն բնութեան» գոյութիւնը, չեն տարւում, անշուշտ, մետաֆիզիկական, բնադրանցական բառախաղերով, այլ մասնանշում են մի կենդանի իրականութիւն: Այդ ուրոյն «ոգին» մի սին, դատարկ հնչուն չէ, այլ կայ, անտարակայս, իւրաքանչիւր ազգի ծոցում, թէպէտ և անշուշտօրէն ու անվերջում ելի: Նա շարունակում է, յարատևում՝ ազգային գոյութեան բովանդակ տարածութեան վրայ: Բոլոր այլազան փոփոխութիւնների մէջ նա մնում է, որպէս յաւերժական կենտրոնական սուբստանցը, գոյութիւնը: Բոլոր այլազան ազգութիւնների մէջ այդ սուբստանցները շեշտում են, իւրաքանչիւր իր զատ, ուրոյն կերպարանքով: Այս, անկասկած, զուտ Փրանսիական բնաւորութիւն կամ ոգի, ինչպէս կայ գերմանականը, անգլիականը, ռուսականը, հայկականը, հրեականը և այլն:

Իւրաքանչիւր ազգ տարբեր ձևով է յարմարում քաղաքակրթութեան մեծ պայքարին, տարբեր տեմպով, արագութեամբ է ընթանում իւրաքանչիւրի առաջադիմութիւնը, տարբեր գրոշմ, տիպ են կրում և քաղաքական ու սոցիալական հաստատութիւնները: Այս ինչ ազգը կատարում է իր պատմութիւնը ստիւններով, թռիչքներով, այն ինչը—հանդարտիկ ու յամբարձիւց է Լուիսիցիայով: Այս ինչ ազգը համեմատաբար աւելի ժիր է, դործունեայ, աշխատասեր, ընդունակ արգասաւոր ձեռներեցութեան, այն ինչը՝ ծոյր անհոգ, դանդաղաշարժ, ֆատալիստ: Այս ինչ ժողովուրդը դաւանում է մի կրօն, որ աւելի նուրբ է իր էութեամբ,

Ալիթրում, Գերմանիայում կամ Ֆրանսիայում—հրեաների քիւն աւելի արագ է անում, քան Բրիտանիաներինը և որ առաջիններն աւելի այդուրեքեք են մաքտում ձեռնարկում դէմ:

Բայց դրա հետ միասին՝ յայտնի է միևս, բացասական յայտնաբերում և զինուորական կազմակերպութեան բուլտիւրը կամ յայտնաբերում արիւններից միև: Յիբեցի, վերջապէս, իբրև այդ ցեղի հոգեկան առանձնայակութիւն—իրամի ու սպեկուլացիայի ուսանդական պատկանումն է հետ վառ զգայականութիւնն ու երեակայութիւնը, որ վաղուց ի վեր արտադրել է նոյն սեղանագործութիւններ կրօնական, բանաստեղծական և ամուսանդ երաժշտական աշխարհում... Ոչ մի ցեղ, ասում է Ռիբո, չի արտադրել այնպիսի ուժեղ համեմատութեամբ հուշակաւոր երաժիշտներ, ինչպէս հրեայիւնը (Մեդիտեմ, Հալելի, Սայերբեր: Ռուբինցայն, Լալլոն):

աւելի հոգեւոր-բարոյական, այն ինչը՝ ընդհակառակը, կրօնական պաշտամունքների, «գրայտի» ու այլ հասկացողութիւնների մէջ շեշտում է համոյապաշտ ու զգայնապաշտ ոգին, ցանկութիւնները... Այդ բոլորն, անշուշտ, բլրում է ժողովուրդների յատուկ մասժեղակերպից ու զգայակերպից, նրանց ցեղական կամ ազգայնական բնաւորութիւնից:

Յամենայն դէպս, սխալ կը լինէր à priori «հարթել», ջնջել ժողովուրդների քաղաքակրթական ունակութիւնների ու ձգտումների տարբերումները. նրանք փաստ են և կուշտուրայի ու դաստիարակութեան կոչումն է՝ ըստ կարելոյն ու աստիճանաբար. թուլացնել բացասական բնազդների ուժը, յօգուտ դրականի... Ծամանակակից սօցիալական մեծ շարժումը ևս, որ ձգտում է բոլոր ազգերի տիեզերական միութեան ու հաւասարութեան, չի անգիտանում ազգային խորունկ առանձնայատուկութիւնների գոյութիւնը և սօցիալիզմը բոլոր երկրներում, բոլոր ազգային շրջանակներում, իր նւաճողական ընթացքի մէջ յարմարում է ազգի ուրոյն բնաւորութեան, մասժեղակերպին ու զգայակերպին: Արեւել է ասել՝ որքան ազգեր—այնքան սօցիալիզմներ... Ազգերի այդ առանձնայատուկ բնաւորութիւնների, ոգիների, խառնուածքների անվերջ այլադասութիւնից և հետևում է «ազգային մասիաների», կուշտուրական առաքելութիւնների այլադասութիւնը, որ այնքան անհրաժեշտ ու արգասաւոր է տիեզերական քաղաքակրթութեան համար և որ այսօր շեշտում են ու դրատում ամեն կարգի սօցիոլոգները, հասարակագէտները, թէ բուրժուա և թէ սօցիալիստ...

Ո՞վ է օտար՝ ազգերին այդ ուրոյն բնաւորութիւններով ու մասիաներով...

Մի Ժամանակ, երբ թեօլոգիական, ասուածաբանական տեսակետը միահեծան թագաւորում էր «գիտական» հետազոտութիւնների աշխարհում, ամեն բան, ամեն բնական ու հասարակական երևոյթի մայր-պատճառը տեսնում էին «երկնային նախանձամութեան» մէջ: Բայց այդ տեսակետը վաղուց արդէն ու վերջնականապէս յաղթահարած է և Ժամանակակից գիտութիւնը բնական ու հասարակական բոլոր այլազան երևոյթները բացատրելու համար՝ կոչ է անում զուտ բնական ու հասարակական գործօններին, պատճառներին:

Ազգային բնաւորութիւնների ձուլման դարաւոր գործողութեան մէջ ահագին դեր են խաղացել հասարակական, պատմական պատճառները, տնտեսական զարգացումը, պարավունքի եղանակը և այլն... սակայն, ինչպէս մասամբ տեսանք արդէն նախորդ էջերում, ամեն բան ազգայնական սուբստանցի մէջ չի վերածուում այդ տնտեսական կամ պատմական մատերիալիզմին. բնութիւնը, գոյութեան կուշտ պայմանները, ֆիզիկական, մարդաբանական գործօնները ևս իրենց որոշ տեղն են պահանջում ազգային բնաւորութիւնների ճնշաբերութեան ու զարգացման պրօցէսի մէջ: Երբ, օրինակ, երկրագործ ժողովուրդների—ուսնների, հօլլանդացիների, Տայբերի և այլն—յամառ, պատմական դիմացկունութիւնն ու տոկոսութիւնը փորձում են բացատրել իրենց պարավունքի եղանակով, փորձում են պարզել այն հանգամանքով որ այդ ազգերի ճնշող մասան, ընդհանուրութիւնը, պարապել է միշտ երկրագործութեամբ, մի արհեստով, որ արտադրում է սովորաբար ծանրաշարժ, տոկուն ու կուռ բնաւորութիւններ. երբ քերդ ու այլ թափառական ժողովուրդների հոգեբանութիւնը, նրանց թալանի ու յափշտակութեան խորունկ բնազդը, նրանց աւանդական արհամարհանքը դէպի մարդկային անձնաւորութիւնը, նրանց ծոյլ իներտ, պարագիտական հակումները փորձում են բացատրել նոյն պարավունքի եղանակով, թափառաշրջիկ անասնապահարհութեամբ, արդիւնաբերութեան նահապետականութեամբ, խոպանութեամբ—դրանով, անշուշտ, ասում են մի մեծ ճշմարտութիւն:

Սակայն, կրկնում ենք, այդ և նման «հասարակական գործօնները» բաւական չեն լուսաբանելու ազգերի բովանդակ հոգեբանութիւնը, ազգայնական բովանդակ «սուբստանցը»:

Եղել է մի ահագին Ժամանակաշրջան — պատմութեան

շեմքից անդին—երբ ժողովուրդների վրայ տիրական ազդեցութիւն են ունեցել ոչ թէ անտեսութեան ձևերը, ոչ թէ պարավունքի, արդիւնաբերութեան եղանակը, այլ շրջապատ ու ընդհանուր թիւնը—կլիմայ, հող, աշխարհագրական պայմաններ և այլն, որոնց մասին կը խօսենք յաջորդ յօդուածի մէջ: Այդ բնական, տիեզերական շրջապատը, կարճակերպելով ժողովուրդներին ֆիզիկապէս ու ֆիզիոլոգիապէս, վաղուց արդէն հաղորդել է նրանց մի շարք հակումներ, որոնք հետզհետէ շեշտել ու զարգացել են դարվնական մեծ օրէնքի, «գոյութեան կուշտ» զօրութեամբ: Այդ հակումները—նոյն դարվնեան «բնական ընտրութեան» (natural selection) և Ժ ա ո ա ն գ ա կ ա ն ու թ ե ա ն օրէնքով փոխանցել են սերնդէ սերունդ, իւրաքանչիւր ազգութեան ինքնատիպ էւօլյուցիայի մէջ:

Աերադառնում ենք մեր սկզբնական հարցումին. ինչպէս է կատարւում այդ Ժ ա ո ա ն գ ա կ ա ն փ ո խ ա ն ց ու ժ ը: Ի՞նչ է նրա էութիւնը: Ինչպէս է բացատրւում այն մեծ, ուշագրաւ իրողութիւնը՝ որ մի ազգի անդամները, այնքան տարբերելով հանդերձ իրենց անհատական բարեմասնութիւններով, ունին սակայն բազմաթիւ ընդհանուր գծեր. ինչպէս է բացատրւում, որ նրանք ունենալով երկրագնդի բոլոր մարդ-էակների հետ ֆիզիկական ու հոգեկան այնքան խոշոր նմանութիւններ, այնուամենայնիւ դարձեալ խստիւ տարբերում են նրանցից իրենց մի շարք առանձնատուկ գծերով...

Ժառանգականութեան այդ երևոյթը, ինչպէս ասացինք, տիեզերական մեծագոյն աւելցուածներէ մինն է, բայց «աւելցուած» ասելով, չը պէտք է հասկանալ «գերբնական» որևէ բան, որևէ «հրաշք»... Նա նոյնքան բնական մի երևոյթ է, որքան նիւթը և նրան շնչաւորող ուժը, որքան էակների ծնունդն ու զարգացումը, տիեզերական բովանդակ շէնքն ու էւօլյուցիան «հրաշքի» ու «գերբնականի» գաղափարը վաղուց քշած է դրական մտքի հօրիզոններից և վաղուց արդէն դիտութեան ահեղ հարւածների տակ դասավիժուել են իրենց երկնային բարձունքներից այն «միահեծան» քըրմերը, որոնց կամքով ու քմահաճոյքով մարդկային տգիտութիւնը բացատրել է՝ դարերի ընթացքում տիեզերական կնճիւղները: Նախանձամութեան բարի ու չար քմահաճոյքը բնւո տեղ չունի տիեզերքում, նա մի հոյակապ բանազգուշանք է. բնական այլազան երևոյթները իրօք հրաշալի են, բայց նրանք «հրաշք» չեն: Հրաշքը ենթադրում է պատահականութիւն, ենթադրում է և «հրաշագործ ձեռք», գերբնական մի էակ, որ ըստ իր հայեցողութեան միջամտում է տիեզերական պրօցէսի, գործողութեան մէջ: Խախտում է նրա հաւասարակշռութիւնը, պատուում է երևոյթների կուռ շղթան, նրանց օրինական, ճակատագրական ընթացքը... Այդ տեսակ «միջամտութիւններ» ու «պատահականութիւններ» գիտութիւնը չի կարող ընդունել. նա հաստատել է վաղուց ի վեր և անհերքելի ապացոյցներով, որ բնութեան օրէնքները ճակատագրական են, անդրուէլի, որ բնական բոլոր երևոյթները դարբնած են կուռ, անասնային պատճառաւորաբար շղթայից ու թեթաւութեան (determinisme), օրինականութեան մէջ... Ստեղծագործող Արարիչը չէ ուժը հէնց ինքը բնութիւնն է, ինքը «տիեզերական անվերջօրէն անվերջ Սուբստանցը» (la Substance infiniment infinie) — մեծ Սպինոզայի արտաշայտութեամբ:

Նոյն «օրինականութիւնը» — Ժ ա ո ա ն գ ա կ ա ն ու թ ե ա ն աշխարհում. նոյն «պատճառական շղթայակցութիւնը» — մարդկային սերունդների յաջորդական պրօցէսի մէջ: «Հրաշք» չը կայ և այդտեղ: Թեև, իրօք, երևոյթը հրաշալի է իր կատարեալ նպատակաւորութեամբ, իր խորհրդաւոր, աւելցուածային բնաւորութեամբ: Այստեղ ևս օգնութեան են հասնում գիտնականները: Գիտնական հիւսիսը թէ գն է ընդ, թէօրինները: Եւ մէկը նրանցից այսօր բաւական յարգի է գիտական ասպարէզում. — գերմանացի Ա ա յ ս մ ա ն ի թ է օ Ր ի ա ն:

Վաղուց դիտւած իրողութիւն է հարազատն էր ի նմանութիւնը Ծնող ու զաւակ, բոլոր ու եղբայր և աւելի

Տեւաւոր ազգակիցներ մասնում են խոշոր ֆիզիկական ու հոգեկան նմանութիւններ: Երկույթը զբաղեցրել է դեռ Գարվինին: և նա փորձել էր առաջին անգամը գիտականորէն լուսաբանել այն: Նա տեսել էր Pangenesis-ի, «Տամածնութեան» իր ժամանակաւոր հիպոթեզը: Նրա համեմատ՝ հօր ու ժօր մարմնի բոլոր հիւսուածքները արձակում են մանրիկ սաղմիկներ, որոնք հաւաքւում ու միաւորւում են սեռային բջիջների մէջ: Այդ սաղմիկների միաւորումից իբր թէ առաջանում է՝ մի կողմից սպերմը, միւս կողմից՝ ձուն. և ապա սերմի ու ձուի բաղադրութիւնները, աւելի ճիշտ կ'որի զ ն ե ը ը ի մի ձուլելով, աճելով ու զանազանաւորելով, ծնունդ են տալիս երեխային: Այդպիսով, ուրեմն, դարվինեան հիպոթեզի համաձայն՝ ծնողների օրգանիզմները ամբողջապէս մասնակցում են զաւակի արտաբերութեանը:

Հրապարակ ելաւ և Հեկկելի Perigenesis-ի թէօրիան, որ վերագրում էր ժառանգականութեան երկայնք սաղմանիւթի առանձնայատուկ շարժողութեան եղանակին: Երկու հիպոթեզներն էլ յետ մղեցին, իբրև անբաւարար: Ծանուցեցին և բազմաթիւ ուրիշ հիպոթեզներ, որոնք այսօր մրցում են կատարէն, իւրաքանչիւրը ձգտելով տիրել հրապարակին: Վերջին 15 տարիները մեծ ազմակ հանեց Այսմանի հիպոթեզը, որ անակնկալ էր շատերի համար:

Անակնկալն այն էր՝ որ Այսման հաստատում էր միևնոյն սաղմանիւթի շարժողութեան կողմէն (Die Dauerhaftigkeit des Keimplasmas) — սերունդների երկարածիք շլթայի մէջ: Եւ դրանով լոյս էր սփռում ազգային ժառանգութեան, նրա էութեան ու յարատեւութեան կիճիւնների վրայ:

Բացատրենք: Սերմի և ձիկ կորիզները ի մի ձուլելով, առաջ են բերում այն զարմանալի համադրական բաղադրութիւնը մայրական արգանդում, որի սնունդն է սաղմ, սաղմային կորիզ և որից ստեղծագործւում է երեխայի բովանդակ օրգանիզմը: Այդ սաղմային բաղադրութիւնը կամ սաղմանիւթը (Keimplasma, Plasmе germinatif), ըստ Այսմանի, բաժանւում է երկու մասի: Մէկը, որ կոչւում է գործօնիւթ, ենթակայ փոփոխութիւնների. նրանից առաջանում, կազմակերպւում է երեխայի մարմինը: Միւսը կոչւում է անգործօնիւթ, մնում է որակով անփոփոխ. նա կազմակերպւում է երեխայի սեռական բջիջները: Այդպիսով, ուրեմն, վերջինները ոչ թէ կազմւում են նորածինի սեփական մարմնից, այլ գալիս են անմիջապէս ծնողների սեռային բջիջներից: Առաջին մասը — գործօն սաղմանիւթը — որ ինչպէս ասացինք, նիւթում, կազմւում է երեխայի մարմինը, կամայ-կամայ ծախսւում է, սպառւում ու մեռնում: Երկրորդ մասը — անգործօն կամ անփոփոխ սաղմանիւթը — անցնում է շարունակաբար ծնողներից զաւակներին, պահպանւում է յաւիտենօրէն սերմի կամ ձիկ մէջ. նա անձ ահ է:

Այսպէս է յայտարարում Այսմանի. հռչակաւոր հիպոթեզը: Եթէ, ուրեմն, մի ազգի, մի ցեղի մէջ դարերի ընթացքում իրարու յաջորդող սերունդները նմանում են իրար, պատճառն այն է, որ այդ բոլոր սերունդները թխած են, այսպէս ասած, միևնոյն նիւթից, որ նրանք բոլորը առաջանում են միևնոյն սաղմանիւթային սուբստանցից, զանգւածից:

Ազգային անակնկալն է ու թիւնը, հետեւապէս, հիմնւած է մասամբ այդ ժառանգականութեան վրայ: մի ազգի անդամների մարմնի ու բնաւորութեան նմանութիւնները բղխում են այն իրողութիւնից, որ ազգակից սերունդները ժառանգել են ը ն գ ճ ն ա լ ի ն ի ք ն ե ը ի ց նոյն ֆիզիկական, ֆիզիոլոգիական, հոգեբանական գծերը: Այդ թէօրիայի համաձայն, հայ ազգութեան հեւաւոր նախահայրերը — լինին նրանք մի զոյգ, կամ մի տոհմ, նահապետական մի ընտանիք — ունեցել են նոյն հիմնական բնահատկութիւնները (Naturanlage), բնաւորութեան նոյն էական գծերը, որ կազմւում են մեր ժամանակի միջին հայի յատկանիշը: Սա մի հոյակապ թէօրիա է, որ գալիս է, այսպէս ասած, ներազործելու ազգային ու

թեան անձ ահ ու թիւնը, փաստաբանելու ընդհանուր պայկենական սաղմանիւթի անկորնչելութիւնը, փաստաբանելու և ազգային անհատականութեան յաւերժական պահպանումը:

Բայց ինչո՞ւ են ժառանգւում նախնիքներից այս և ոչ այն յատկութիւնները, և ի՞նչն է հաղորդում այդ նախնիքներին այս կամ այն առանձնայատուկ բնահատկութիւնները, որոնց յետոյ վիճակւած է անցնելու դարեկար, սերնդէ-սերունդ. որոնք են այն նախնական, հզօր, վճռական գործօնները, որ դնում են այս կամ այն կիւքը՝ ազգային տարբեր համայնքների վրայ, որոշում են նրանց տիպարը, միանգամ ընդմիջում ուղղութիւն են տալիս. անգամ նրանց հոգեբանութեանը:

Այս հարցումին պատասխանել կարող է միայն՝ դարձեալ դարվինեան մեծ օրէնքը — բնական ընտրութիւնը գոյութեան կռիւի մէջ:

Ահա նոճաղ, թափառական մի ժողովուրդ: Առնենք հէնց, իբրև օրինակ, բիւրդ ժողովուրդը: Ու ազգային հատկութիւնները նրա տիպի ամենաբնորոշ գծերից են: Եւ Այսմանի թէօրիայի համեմատ՝ բիւրդ համայնքի ամենահեւաւոր նախնիքները ունեցել են անհրաժեշտաբար նոյն գծերը, որ ժառանգել են ժամանակակից բիւրդը: Մրտելից են առաջացել այդ հատկութիւնները: Անցնենք երևակայութեամբ այն հեւաւոր նախնիքների շրջանը: Համայնքն ապրում էր, ենթադրենք, նահապետական գերդաստանի ձևով, մէկ շէյխի, առաջնորդի հովանաւորութեան ու հրամանատարութեան տակ, պարապում էր սրտորդութեամբ խաշնարածութեամբ: Քանի դեռ կան ճօխ, լայնարձակ արօտատեղեր, սնունդն էլ կայ — և տոհմն ապրում է առատութեան մէջ: Բայց ահա աճում է խաշնարած համայնքը, աճում են շուրջը և ուրիշ, նոյնպէս սրտորդ ու խաշնարած, ազգաբնակիւթիւնները: Հողը, սնունդը այլ ևս հերիք չէ... Նրանց միջև պայթում է նոյն անողք ու յարատեւ պատերազմը, նոյն «գոյութեան կռիւը», որ այնքան յաճախ մղւում է նաև կենդանական նմանապահանջ տեսակների մէջ — կռիւ յանուն տարածութեան, կռիւ յանուն սնունդի:

Ո՞վ է յաղթում այդ պատերազմի մէջ: Հարկաւ, միայն այն անհատները, որոնք պատահաբար, ձեռք են բերել իրենց կեանքում լաւ կռուողի յատկութիւններ, ճարպիկութիւն, ուժ և սլոյն: Այդպիսիները աւելի շան ունին յաղթանակելու և իրենց սերունդն ապրեցնելու ու բազմացնելու: Իսկ նրանք, որոնք թոյլ բուռնցք ունին և ծոյլ, երկշտ հոգիներ — նրանք ընկնում են պատերազմի մէջ, նրանց սերունդը չի շարունակւում, այլ ջնջւում է բնութեան հզօր ու անագորոյն հրամանով: Առի կրկեսին «յարմարողներն» ապրում են, յարատեւում, չը յարմարողները անդունդ են գնում կամ ստրկանում: Այդտեղ է դարվինեան երկաթի օրէնքը, բնական ընտրութիւնը... Մենք տեսանք, որ նա համատարած մի երկույթ է կենդանական թագաւորութեան մէջ, նրա զարգացման էւօլյուցիայի միջին է, ազգակիր: Առի մրցման զօրութեամբ, անասնական ամեն մի տեսակի մէջ առաջ են գալիս ամենաճարպիկ կամ ամենուժեղ անհատները, մշակւում է հեազհետէ բարձրագոյն տիպը: Առի, մրցման շնորհիւ, այլ և այլ տեսակների մէջ զարգանում են այլ և այլ խոշոր առանձնայատուկութիւններ, որոնցով նրանք յարմարւում են իրենց միջավայրին և յատկաւորում են (la surviуance des plus aptes): Առանց այդ անողք ու յարատեւ պատերազմի, չէին զարգանայ ու զանազանաւորել կենդանիների օրգաններն ու ֆունկցիաները, անդամներն ու զգայարանները:

Բնութիւնն ընտրում է... Երբ շահաէտ են դրացիների դէմ մղած գոյութեան կռիւ մէջ ուղղակի սրտը հակուձեռնը — նրանք (այդ վերջինները) բնութեան գերագոյն նախասահմանումով, յատկաւորում են սերունդների մէջ, ժառանգւում են յաղթող հայրերից իրենց զաւակներին: Յաջորդ սերունդն արդէն մեծ մասամբ կազմւած է լինում բաշարի և ուղղման անհատներից: Աստիճանաբար աճում է համայնքի մէջ այդ վերջինների թիւը, աստիճանաբար նւազում է մեղ-

կերի, թուլամորթների տոկոսը և եթէ կենսական պայմանները մնում են անփոփոխ, վերջիվերջոյ ամբողջ ժողովուրդը դառնում է էպպէս ռազմական մի համայնք, յանձին իր բոլոր անդամների *):

Բնական ընտրութեանը գործակցում է սեռական ընտրութիւնը, որ, ինչպէս յայտնի է, նոյնպէս համատարած մի երևոյթ է կենդանական աշխարհում: Թափառական այն ցեղերի, դիցուք քրդերի մէջ, նրանց զարգացման արշալոյսին, գոյութեան յարաժամ կուրի հոսանքում, բնականաբար, կանանց սեռի նախապատուութիւնը վայելել են այն տղամարդիկ, որոնք կուրի մէջ աչքի են ընկել իրենց առնական յատկութիւններով: Ախր ևս ընտրել է, ինչպէս բնութիւնը... քաջ անվեհեր, յաղթանդամ տիպարները: Բնութիւնն ընտրել է կուրօքին, մեխանիկաբար, անգիտակցաբար, կինն ընտրել է հաշտով ու գիտակցաբար: Երկուն էլ նպատակարար են ռազմիկ, առնական սերունդներին, երկուն էլ ճգմել ու արտաքսել են կեանքի կրկէսից՝ թոյլերին, անպաշտպաններին, մեղիներին ու վեհերաններին...

Այդ արտաքսումը՝ չի եղել, ի հարկէ, բացարձակ ու համատարած: Գոյութեան կուրի մէջ յաղթանակողները չեն եղել միայն հզոր բազուկների և ֆիզիկական ճարպիլութեան տէր անհատներն ու հասարակութիւնները: Այդպէս չէ եղել և անանական աշխարհում: Ամեն մի պրօգրէս, յառաջդիմութիւն, որ կատարւում է այս կամ այն անասնական տեսակի մէջ՝ ուժի, ճարպիլութեան, ճիւղնութեան տեսակետից, առաջ է բերում մեռ, մրցակից տեսակների մէջ յարմարելու որոշ ընդունակութիւններ: Մէկը յուսահատ ճիգ է դնում բռնելու որոշ միւսը ճգնում է խոյս տալ հալածողի ճիրաններից և խոստովելու սեռական մշտնջենաւոր ու տազնապատ անհրաժեշտութիւնը զարգացնում է վերջինների մէջ որոշ յատկութիւններ, որոնց շնորհիւ դիմանում է և շարունակում իր սերունդները յաւիտենական գոյամարտի մէջ. Առանց այդ մշտտակ, յուսահատ ճիգերի՝ պրօգրէս չէր լինի անասնական աշխարհում: Առանց այդ առերիջ ու արիւնհասիկ կռիւների՝ պրօգրէս չէր լինի և մարդկային աշխարհում: Ասել ենք արդէն—չեղանք դարձեալ կուրի միջոցով է, որ նախապատմական մանրիկ համայնքումները հետզհետէ միացել են ու կազմել ընդարձակ մարդկային համայնքներ: Կուրի շնորհիւ է, որ ծնունդ է առել և կամ յամենայն դէպս աճել, զարգացել է հասարակական զորք և կրթութիւնը, համերաշխութիւնը միևնոյն համայնքի, միևնոյն ցեղի, միևնոյն ազգի և միևնոյն պետութեան անդամների մէջ: Մարդիկ նախ և առաջ մտածել են կազմել միահամուռ յարձակման ու պաշտպանութեան սիստեմներ, որոնցից և առաջացել են ժամանակի ընթացքում հասարակական գործակցութեան այլազան՝ ձևերը:

«Նստարկոյս, ասում է Սպենսեր, չի կարելի արդարացնել տիեզերական այդ անտազօնիզմը (հակամարտութեան) պատճառած սարսափները — անտազօնիզմ, որ սկսելով 10,000 տարի սրանից, առաջ համայնքների մշտնջենաւոր ընդհարումներով՝ յանգել է մեծ ազգերի մեծ պատերազմներին: Պէտք է, սակայն, խոստովանել, որ առանց այդ սարսափների՝ աշխարհը տակաւին բնակած կը լինէր սոսկ թոյլ տիպի մարդկանցով, որոնք կը փնտրէին իրենց ապաստանը քարայրների մէջ և կը սնւէին գարշնիւթերով» (**):

Ոչ, գոյութեան կուրի մէջ յարմար ու ընտրելի ու յարատևողները միմիայն ուժեղներն ու զիշտաիչները չեն: Բնութիւնը ամենուրեք չի դատապարտել ոչ ունի մասնիկը ժողովուրդներին: Նայեա՛մ միջավայրին՝ նա զարգացրել է որոշ խաղաղ համայնքների մէջ, բունակալական ազդեցութիւններով շրջապատւած ժողովուրդներին—դիցուք հայերի, հրէաների մէջ—ուրիշ կարգի բնահասկում:

ն և որ, սրել է նրանց միտքն ու հոտառութիւնը, զարգացրել է նրանց մէջ հնարագիտութիւն, խորամանկութիւն, յամուռ ու կուր դիմացկանութիւն, զարգացրել է, մի խօսքով՝ «յարմարելու» այլազան բնազդներն ու ընդունակութիւնները... Բնազդներ և ընդունակութիւններ, որոնք, աւաղ, միշտ չեն ուղղւել դէպի ազնիւր, դէպի բարձրն ու առաքինին, այլ և յաճախ ստորացրել են ցեղը, կաշկոնդելով անդամալուծելով դրական, ազնիւ մղումները *), արձարծելով տիրապաշտութեան, ստրկամոլութեան, մարդկային անարգ սերվիլիզմի յատկութիւնները, որոնք այնքան դանդաղութեամբ ու դժարութեամբ են արժատախլուում, տարաբախտաբար, այդ ցեղերի գիտակցութիւնից:

Բայց նրանք «պարել են»... Բայցառական հակումներով ծանրաբեռնւած՝ այդ ազգերը կարողացել են յարտակել քար տալ իրենց գոյութիւնը դարերի մրկոտ արկածների, խուժդուժ, վայրագ ցեղերի, բռնակալական արհաւիրքների միջոց... Նրանք «պարել են»—և ապրել ու այդ գերագոյն հրամայականի, պոստուլատի առջև թերեւս նսեմանում են հաւաքական մարմինն ու այդ գերագոյն հրամայականի կարգի մտահոգութիւնները... Եւս առաւել, որ բարոյականութիւնը հանդիսանում է առաձգական մի հասկայալուծութիւն, որ նրա պահանջները տարբեր են եղել հասարակական զարգացման տարբեր աստիճանների վրայ, որ այն պատմական ու նախապատմական ժամանակներում բարոյականը սովորաբար ձուլւել, նոյնացել է հաւաքական օգտակարութեան՝ հետ... Բարոյական է եղել ամեն բան, որ նպատակ է ցեղի պահպանման. անբարոյական՝ ամեն բան, որ արգելք է եղել նրան:

Չը մտանանք և այն, որ որոշ այդ յատկութիւնները հանդիսանում են յաճախ մի տեսակ երկայրի սրբեր, որ բացասական ժամանակի ու տարածութեան ուրիշ ծայրերում՝ զարնւում է յաճախ իր հակոտնեայի, դրականի մէջ... Այդպէս, օրինակ, ծայրայեղ համբերատարութիւնը բունակալական թե՛ ժիմների հանդէպ, դարաւոր անմուռն համակերպումը մտրակի ու եսթադանի հարւածների տակ՝ մի կողմից մեղկացրել ու ստրկացրել է մի ազգի, դիցուք հայութեան, լայն դանդաւաճում էր, որոնք մինչև օրս էլ չեն թօթափում այդ ստրկական մղձաւանջը. բայց միւս կողմից, նոյն շարաբախտ յատկութիւնների մէջ կուրել-կոփել են այդ գանգաւածները, վատտակել են պաղ, անխուով, ստոյիկեան անտարբերութեան այն շիղը, որով ազգը արհամարհել է ճակատագրի անօրինակ փորձութիւնները և իր ծով տառապանքի միջոց միշտ յուսովաւ, լաւատես հայեացքով ընդհնամարել է գալոց փրկութեան արշալոյսները...

Ո՛վ գիտէ, գուցէ հրէութիւնը ևս չը տար աշխարհին որոյն հանճարի այնքան պերճ արդասիքներ, եթէ նա կրած չը լինէր բազմաթիւ դարերի ընթացքում իր փոթորկոտ, հալածական ճակատագիրը և եթէ այդ ճակատագրի յեղձ յեղումների մէջ զարգացրած չը լինէր այն մի քանի բնորոշ հրէական գծերը, որոնք տեղ-տեղ, երբեմն-երբեմն բացասական լինելով հանդերձ, յղի են արդասաւոր «դրականներով»... Այսօր, օրինակ, ոմանք սերտ առնչութիւն են գտնում հրէական բնասրութեան մէջ դարերից ի վեր արժատացած դրամի պաշտամունքի և վերացական մտայնութեան մտածողութեան այն հզոր թուիչքների միջև, որոնք նոյնպէս այդ ցեղի բնորոշ յատկութիւնն են **):

Դրամը, զերծ ամեն օրակից, զատւած բոլոր այլազան յատկութիւններից, ընդհանրացած—գրամն ինքը միաբնութեան կրթական է, վերացութիւն... Դրամական (speculation, դրամի առևտուր), որ հրէութեան սիրած, առանդական պարապմունքն է, գուցէ,

*) Otto Bauer, Die Nationalitätenfrage.
**) Principes de sociologie.

*) Մոսկուրայի նոյն եղանակով, ինչ եղանակով կուսուրում է այդ կենդանական մակաբոյժների (parasites) աշխարհում, որոնք իրենց միջավայրին յարմարելու, ապրելու համար՝ կորցնում են իրենց այլ եւ այլ օրգանները:
**) Sombart, Die deutsche Volkswirtschaft im 19 Jahrhundert.

յիբաւի, առանց ուղղակի կամ անուղղակի առնչութեան չէ փիլիսոսփայական սպեկուլացիայի (Տայեցողութիւն) և ընդհանրացման կարողութեան հետ, որ այնքան հոյակապ արտայայտութեան է համուն մի Սպինոզայի մօտ և որ այնպէս ուժեղ շեշտուում է նաև Մենդելսոնների ու Մայմօնների մէջ...

Այլ հանգամանք: Գուցէ, ո՞վ գիտէ, նոյն դարաւոր, անյոյս, աղեխարշ հայաճականութիւնն է պատճառ, գուցէ նոյն անարգաւած, սանահարաւած ցեղական էութիւնն է, որ մի առնական դիմադարձութեամբ, մի հզօր ու ազնիւ «ըզվանշով», տիեզերական հակադեցուցութեան վրիժառու օրէնքով, այսօր, նորագոյն ժամանակներում, ծառանում է հր անողորմ հալածողների, ամբողջ հին, բնութուստաւատապետական կարգերի դէմ, յանձին իր ըմբոստ զուակների, Մարքսերի ու Լասալների, Հայնէնների ու Բեօրնէնների, որոնք մի սուրբ ատելութեան կրակով վառւած, ամբողջապէս թոյն ու հեգնանք, ամբողջապէս կիրք ու ցասում, —իրենց հզօր գրիչներով կործանում են թշուառ, իրաւագուրկ մարդկութեան դէմ կառուցած բոլոր շարաշուք պատնէշները և յայտնուում են սօցիալիզմի ու համաշխարհային ազատագրութեան ռահվիրաներ բոլոր երկրներում, առաքեալներ, պաշտամունքի առարկաներ բոլոր երկրներում:

«Թշուառ, իրաւագուրկ մարդկութիւն — որի յաւերժական խորհրդանշանն է ինքը հրեական ցեղը...

Այդպէս, ուրեմն, բնական նախանամութեան անօրինութեամբ, իւրաքանչիւր ազգի հաւաքական, ազգայնական բնաւորութիւնը, իր էական գծերով, կոփուում, ձուլուում է նրա գոյութեան արշալոյսին. իսկ, միջավայրի, կեանքի կուսի տիրական ազդեցութեան տակ, և շարունակուում, յարատեւում է սերունդներ մէջ, նման պայանական սաղմաւնիւթին, որի անսահման յարատեւութեան հիպօթեզը ի տես դրինքը, ըստ Այայմօնի:

Անտարակոյս, բացարձակապէս յաւիտենական ոչինչ չը կայ և «ազգային բնաւորութիւններ» նկատմամբ ևս արդարայի է հերակլիտեան անմահ խօսքը. «ամեն ինչ հոսում է»: Այսման ինքը ջերմ դարվինիստ է, էւօլյուցիոնիստ և ընդունում է մշտնջենական, անվերջ կերպարանափոխութեան գաղափարը: Ազգային բնաւորութիւնները ևս փոփոխական են շրջապատի, ժամանակի, գոյութեան կուսի, կրթութեան ու քաղաքակրթութեան յարափոփոխ ազդեցութիւնների տակ: Աժխտելի է արդէն անհատ-տիպերի անվերջ այլազանութիւնը՝ հէնց միևնոյն ազգութեան ծոցում: Բոլոր ազգակիցները նմանում են իրար և սակայն անկարելի է գտնել երկու անհատ ազգութեան մէջ, որ նմանէին կատարելապէս, բնութարանապէս: Բոլոր եղբայրների ու քոյրերի մէջ — միևնոյն ընտանիքում — կան աչք ծակող նմանութիւններ և սակայն, անկարելի է գտնել երկու եղբայր կամ երկու քոյր, որ նմանէին կատարելապէս, բացարձակապէս: Որքան աւելի ընդարձակ է ազգակից անհատների շրջանը, որքան աւելի է ծերանում, հնանում մի ընտանիքի տոհմածառը, այնքան աւելի է շեշտուում տարբերութիւնը և ազգակիցների միջև: Անհատները տարբերում են ոչ միայն իրենց կեանքի ընթացքում ձեռք բերած առանձնայատկութիւններով, այլ նրանք տարբեր են նոյնիսկ մայրական արգանդի մէջ, ուր իւրաքանչիւր սաղմ, երեխայ ենթակայ է տարբեր ազդեցութիւնների ու ճակատագրի... Աերջապէս տարբեր են նոյն իրենք սաղմաբշի շինէրը, որոնցից գոյանում են արիւնակից անհատները:

Նմանութիւն և տարբերում — դա բնութեան յաւիտենական խաղն է, հակոտնեանների խաղը: Իրանք երկու անհրաժեշտ փոխադարձ լրացուցիչներն են: Ո՞րն է որին յաղթահարելու էւօլյուցիայի անհատնում ծփանքների մէջ... Թուում է թէ երկուսն էլ յաւիտենական են, անջնջելի: Նմանութիւնը, որոշ գծերի ընդհանրութիւնը յարատեւում է կենդանական զարգացման ամենաստորին աստիճաններից մինչև մարդը: Նմանութիւն կայ անգամ մարդու և նախնական պրօթօպլազմի, միաբջջեմօնների միջև. նոյն կենսական երևոյթները, նոյն կենսական սուբստանցը: Մարդը չէ՞ կազմած նոյնպիսի անհամար

բջջեաներից... Բայց և սակայն, սրբաբոյն անգունդ մօների և մարդու միջև...

Հակոտնեանների նոյն խաղը — ազգային զարգացման պրօցեսում: Այդպէս ևս էւօլյուցիան իր ջնջող ու վերաշինող ալիքներում հետզհետէ — դանդաղ, անշուշտ, բայց ճակատագրօրէն — փոփոխելու է ցեղական, ազգայնական բնաւորութիւնները, ինչպէս որ փոփոխում է յարաժամ կենդանական տեսակները... Բայց թուում է թէ, չը նայեա՞ծ մարդկային կենսապայմանների աստիճանական հաւասարեցման երկրազնդի այլևայլ ծայրերում, չը նայեա՞ծ կրթութեան ու քաղաքակրթութեան հարթութաւոր (նոսթէլաւ) ազդեցութիւններին, իւրաքանչիւր ազգութեան էւօլյուցիան, զարգացումը ընթանալու է, այնուամենայնիւ, միշտ իր յատուկ աւազանով, կրելու է միշտ իր յատուկ տիպ — դրոշմը, պահպանելու է — յօգուտ իսկ մարդկային ցեղի բազմօրինակութեան, հարստութեան — իր ուրոյն ազգայնական անհատականութիւնը, համապատասխան այն ջնկ, ուրոյն, զարմանալի սարերգներին, այն տիպար-*determinante*-ներին, որ թաղանթ են ամեն մի ազգի սերնդէ սերունդ ժառանգաւ, նախնաւանդ, անկորնչելի սաղմաւնիւթի մէջ...

Կ Ա Չ Մ Ա Կ Ե Ր Պ Ա Կ Ա Ն

ՀԱՄԵՐԱՇՆՈՒԹԻՒՆ ԻԹԹԻՉԱՏԻ ԵՒ ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋԵՒ

Հայրեմիքի ազատութիւնը ապահովելու, ամոր հողային ու քաղաքական ամբողջութիւնը մշտապէս պահպանելու, կարգ մը ամծիրու մէջ գոյացած թիրիմացութիւնները փարատելու և օսումնեամ տարրերու միջև լրացողոյ յարաբերութիւններ հաստատելու նպատակով «Իթթիհատ-Թէրազզը» կուսակցութիւնը և Ջ. Յ. Դաշնակցութիւնը կատարեալ համաձայնութեամբ եկան հետեւեալ հիմնական կէտերու մասին.

- 1) Մահամադրութիւնը կիրարկելու և համըային զարգացումը երկրի մէջ ամասամօրէն ամրապնդելու համար պիտի աշխատիմ և պայքարիմ միացած ուժերով, չի խնայելով ոչ մէկ գոհաբերութիւն:
- 2) Բէաքսիօններական շարժումներու հաւանականութեամբ հանդէպ, օրէնքի թոյլատրած բոլոր կարելիութիւններու սահմանի մէջ, պիտի գործն միասիրտ հաստատակաւութեամբ և որոշակի ուղղութեամբ:
- 3) Օսումնեամ մեկրական հայրեմիքը անջատումէ և բաժանումէ գերծ պահելը երկու կազմակերպութեանց միացած գործունէութեան նպատակակէտը ըլլալով, ամոմք պիտի աշխատիմ գործակաւապէս ցրել համըային կարծիքի մէջ բռնակալ ըժմիմէն ժառանգ մնացած այն սուտ գրոյցները թէ հայերը անկախութեամ կը ձգտիմ:
- 4) Երկու կուսակցութիւններն ալ կը յայտարարեն թէ համամիտ են «Նահանգային Իրաւաց Ընդարձակման» մասին, որ կ'երաշխատէ Օսումնեամ ըմդհամուր հայրեմիքի զարգացումն ու առաջադիմութիւնը:
- 5) Իթթիհատ-Թէրազզը և Դաշնակցութիւնը իբրև խրատական միաբազուցում ըմդումելով մարտ 31-ի դէպքը և Ատամայի ցաւալի աղէտը, որոշեցիմ աշխատիլ ձեռք ձեռքի տւած՝ վերոյիշեալ հիմնական կէտերու իրագործման համար:

Ա Չ Գ

Կը խմորեմք «Դրօշակի» հատով ստացող բաժանորդները մորոգել իրենց հասցէները, ուղարկելով մեզի բաժնեգիրը, հակառակ պարագայիմ պիտի դադրեցնենք առաքումը մոր տարիէմ սկսած:

«ԴՐՕՇԱԿԻ» ԲԱԺՆԵԳՐԻՆ Է 3 ԱՐԱՆ: